Հավելված
ՀՀ Նախագահի
2007թ. փետրվարի 7-ի
ՆՀ- 37 -Ն հրամանագրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

(Հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում)

Ներածություն. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» հասկացությունը

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգը: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը ենթակա է ճշգրտումների՝ ըստ ներպետական և միջազգային իրադրության, սպառնալիքների ու մարտահրավերների փոփոխման, ինչպես նաև ըստ սույն փաստաթղթում նշված նպատակների իրականացման:

## Ազգային անվտանգության ռազմավարության իրագործման հիմնական երաշխիքներն են՝

- պետական կառավարման համակարգի արդյունավետությունը,

- իրավունքի գերակայության ապահովումը,

- ժողովրդավարական արժեքների արմատավորումը,
- դատական իշխանության անաչառությունն ու անկախությունը,
- զինված ուժերի մարտունակությունը,
- անվտանգության և իրավապահ մարմինների արդյունավետ գործունեությունը,
- արդյունավետ միջազգային ներգրավվածությունն ապահովող արտաքին քաղաքականությունը,
- սոցիալական արդարության ապահովումը:

I. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, դրանց դեմ ուղղված սպառնալիքները

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքները Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքներն են՝

- Անկախությունը. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:
- Պետության և ժողովրդի պաշտպանվածությունը. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության ֆիզիկական գոյությունը:
- Խաղաղությունը և միջազգային համագործակցությունը. Հայաստանի Հանրապետությունը ձգտում է իր միջազգային ներգրավվածության աստիճանի բարձրացմանը, նպաստում տարածաշրջանում և աշխարհում խաղաղության և անվտանգության ապահովմանը:
- Հայապահպանությունը. Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը՝ Հայրենիքում և Սփյուռքում:
- Բարեկեցությունը. Հայաստանի Հանրապետությունը ձգտում է կայուն զարգացման միջոցով բնակչության համար ապահովել կյանքի բարձր որակ:

2.Ազգային անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները

Ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոններն ու գործողություններն են՝

Անկախության ոլորտում.

- սահմանադրական կարգի, պետականության բոլոր բաղադրատարրերի, պետական կառավարման համակարգի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովումը,
- ժողովրդավարական համակարգի զարգացումը և պաշտպանությունը,
- մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովումը,
- Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների լիարժեք ինտեգրումը և պաշտպանվածությունը,
- շուկայական հարաբերությունների խորացումն ու արմատավորումը, տնտեսության գիտատար, ինովացիոն, արտահանմանն ուղղված ճյուղերի խթանումը,
- էներգետիկայի, տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների հուսալի գործունեության ապահովումն ու պաշտպանությունը:

Պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում.

- զինված ուժերի մարտունակության, անվտանգության և իրավապահ մարմինների գործունեության արդիականացումն ու արդյունավետության բարձրացումը,
- մասնակցությունը վերազգային հանցագործությունների, այդ թվում՝ միջազգային ահաբեկչության, զանգվածային ոչնչացման զենքի ու դրա բաղադրամասերի, թմրանյութերի ու կեղծված դեղորայքի տարածման, մարդկանց առևտրի, անորակ սննդամթերքի արտադրության և ներմուծման դեմ միջազգային պայքարին,
- ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը,
- բնական պաշարների պահպանումն ու արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,
- բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների՝ ժամանակակից մոնիտորինգով և կանխարգելմամբ զբաղվող միջազգային կառույցներում ներգրավումը, բնական և տեխնածին վտանգների հուսալի կանխատեսումը, կանխարգելումն ու չեզոքացումը, քաղաքաշինական համակարգերի անվտանգության, հուսալիության և կայունության ապահովումը:

Խաղաղության և միջազգային անվտանգության ոլորտում.

- Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության ամրապնդումը, տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատումը, երկրի միջազգային ներգրավվածության աստիճանի բարձրացումը, այդ թվում՝ խաղաղության և անվտանգության պահպանման միջազգային ջանքերին, խաղաղապահ գործողություններին մասնակցելու միջոցով:

Հայապահպանության ոլորտում.

- Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների համապարփակ հայեցակարգի մշակումն ու իրականացումը, Սփյուռքի ներուժի համակողմանի համախմբումը,
- հայագիտական ճյուղերի՝ հայոց լեզվի, գրականության, պատմության ու մշակույթի՝ որպես ազգային հոգևոր ժառանգության հարատևությունն ապահովող և ազգային ինքնությունը մարմնավորող գործոնների զարգացումը,
- ազգային մշակույթի համակողմանի զարգացումը՝ ինքնատիպության հիմքերի պահպանմամբ և համամարդկային մշակութային արժեքների ու նվաճումների յուրացմամբ, արտերկրում հայկական մշակութային ժառանգության ու նվաճումների արդյունավետ ներկայացումը:

Բարեկեցության ոլորտում.

- աղքատության հաղթահարումը,
- խոցելի խմբերի պաշտպանվածությունն ապահովող սոցիալական քաղաքականության իրագործումը,

- արդյունավետ և մրցունակ գիտակրթական քաղաքականության մշակումն ու կենսագործումը՝ հատկապես նորարարական զարգացման ուղղությամբ,
- առողջապահության համընդգրկուն ու արդյունավետ համակարգի զարգացումը միջազգային բարձրագույն չափանիշներին համապատասխան,
- անհատի և հասարակության հոգևոր-մշակութային զարգացման պայմանների ապահովումը:

3.Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները

Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն են՝ պետության, հասարակության, ընտանիքի և անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխլող կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երևույթները, գործողություններն ու անգործությունը: Այդպիսի սպառնալիքներ կարող են ծագել երկրի ներսում (ներքին սպառնալիքներ) և երկրի սահմաններից դուրս (արտաքին սպառնալիքներ):

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առանցքային խնդիրն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը:

20-րդ դարի վերջին վերականգնելով իր անկախությունը՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս պահպանում է անցումային ժամանակաշրջանին բնորոշ կերպափոխման առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված են հիմնական ներքին սպառնալիքները:

Նույն ժամանակահատվածում Հայաստանի մերձակա տարածքներում ի հայտ եկան անվտանգության համար ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային սպառնալիքներ: Ներտարածաշրջանային սպառնալիքներն առավելապես պայմանավորված են տարածաշրջանում առկա ազգամիջյան հակամարտություններով, զինված բախումներով: Արտատարածաշրջանային սպառնալիքները հիմնականում բխում են տարածաշրջանի նկատմամբ բոլոր հիմնական ուժային կենտրոններում առկա շահերի խաչաձևումից:

Արտաքին սպառնալիքներն են՝

- Զինված ուժի կիրառումը. Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքներ են հնչում Ադրբեջանի Հանրապետության կողմից: Թեև առկա են այդպիսի զարգացումը կանխող բազմաթիվ գործոններ, այնուամենայնիվ ամենաբարձր մակարդակով հնչող բացահայտ ռազմաշունչ հայտարարությունները հիմք են տալիս դրանք համարելու անմիջական սպառնալիքներ: Այդպիսի զարգացման պարագայում Թուրքիայի Հանրապետությունը, լինելով Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող է նման սպառնալիք ստեղծել: Հայաստանի Հանրապետությունը, հենվելով միջազգային իրավունքի հանրահայտ նորմերի վրա, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շրջափակումը դիտարկում է որպես իր դեմ ուժի կիրառում:

- Էթնիկական հակամարտությունները, ներքին բախումները և ռազմական գործողությունները սահմանակից պետություններում. Հայաստանի համար նման զարգացումները կարող են ներկայացնել տարաբնույթ սպառնալիքներ՝ տարանցիկ ենթակառուցվածքների դեմ դիվերսիոն գործողություններից մինչև հարևան պետություններում ծավալվող ռազմական գործողությունների անդրսահմանային ներազդեցությունները:
- Սահմանամերձ պետությունների տարանցիկ ուղիների խափանումը. Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ զգում է Թբիլիսի-Սուխումի երկաթգծի և Վրաստանից Ռուսաստան տանող ավտոճանապարհների չգործելու հետևանքները: Հայաստանի ազգային անվտանգության համար անմիջական սպառնալիք կարող է դառնալ Իրանի հանդեպ միջազգային հանրության կողմից լայնածավալ տնտեսական պատժամիջոցների հնարավոր կիրառումը:
- Ռազմավարական դաշինքների թուլացումը կամ ոչ բավարար ներգրավվածությունը դրանց. Հայաստանի Հանրապետությունը համարում է, որ ռազմավարական դաշինքներին անդամակցությունը պետք է բացառի դաշինքի մեկ անդամի կողմից մեկ այլ անդամի շահերին հակասող գործողությունները: Անհրաժեշտ է հստակեցնել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակներում մեկ անդամ-պետության դեմ զինված ագրեսիայի դեպքում այլ անդամների մասնակցության կանոնակարգերը:
- Ահաբեկչությունն ու անդրսահմանային հանցագործությունները. Հայաստանի Հանրապետության համար անմիջական սպառնալիք է ներկայացնում միջազգային ահաբեկչությունը՝ իր բոլոր դրսևորումներով, զանգվածային ոչնչացման զենքի և թմրանյութերի տարածումն ու տարանցումը, փողերի «լվացումը՝, մարդկանց առևտուրը (թրաֆիքինգ):
- Էներգետիկ կախվածությունը. Հայաստանի Հանրապետությունը, ունենալով սահմանափակ բնական պաշարներ, ունի էներգետիկ կախվածություն: Իրագործված բարեփոխումները թույլ են տվել նվազեցնել այդ կախվածությունը՝ էներգետիկայի ոլորտում ձևավորելով արդյունավետ հարաբերություններ ինչպես երկրի ներսում, այնպես էլ էներգակիրներ մատակարարող հիմնական գործընկեր Ռուսաստանի Դաշնության հետ:
- Հայաստանի մեկուսացումը տարածաշրջանային ծրագրերից. Հայաստանի Հանրապետությունը կարևորում է իր ներգրավվածությունը տարածաշրջանային ենթակառուցվածքային ծրագրերին: Այդ առումով հատկապես կարևոր են Եվրոպական միության (ԵՄ) ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՕԳԵՅԹ ծրագրերը: Նշված ծրագրերից Հայաստանի Հանրապետության դուրս մղմանը միտված Ադրբեջանի Հանրապետության ջանքերը անմիջական սպառնալիքներ են:
- Սփյուռքի ազգամշակութային ինքնության թուլացումը. Հայաստանի Հանրապետությունը կարևորում է Սփյուռքում հայապահպանության խնդիրը: Կազմակերպված և բնակության

երկրներում արդյունավետ կերպով ներգրավված Սփյուռքի առկայությունը կարևոր է Հայաստանի միջազգային ներգրավվածության մակարդակի բարձրացման տեսակետից: Հայաստան-Սփյուռք կապի թուլացումը, փոխհարստացնող շփման բացակայությունը կարող են վտանգ հանդիսանալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքների համար:

- Համաճարակները և աղետները. Հայաստանի անվտանգության համար սպառնալիք կարող են հանդիսանալ սահմանակից շրջաններում, ինչպես նաև անդրազգային համընդհանուր մահաբեր համաճարակների բռնկումը և բնական ու տեխնածին աղետները:

Ներքին սպառնալիքներն են՝

- Պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազումը, դատա-իրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը. Հայաստանի Հանրապետությունը գտնվում է անցումային շրջանում և բարեփոխումների ակտիվ փուլում: Ազգային անվտանգությանը սպառնալիք կարող են լինել պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազումը և բարեփոխումների գործընթացի դանդաղումը: Դատական իշխանության արդյունավետ, անաչառ և անկախ գործունեությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար: Պետական կառավարման համակարգի արդյունավետության կարևոր ցուցանիշ է դրա նկատմամբ հասարակության վստահության մակարդակը:
- Քաղաքական համակարգի անկատարությունը. Ազգային անվտանգության համար վտանգ է ներկայացնում քաղաքական կուսակցությունների կայացման դեռևս ոչ բավարար մակարդակը: Ներկուսակցական ժողովրդավարացումը կարևոր է՝ որպես երկրում ժողովրդավարության ամրապնդման առանցքային նախապայման:
- Ժողովրդավարության արմատավորման ոչ բավարար մակարդակը. Անցումային շրջանում գտնվող պետություններում վտանգված են ժողովրդավարական համակարգի հարատևությունն ու արդյունավետությունը: Անմիջական սպառնալիքներ են՝ մարդու իրավունքների պաշտպանության ոչ լիարժեք համակարգի ձևավորումը, ընտրական գործընթացներում առկա թերությունները, քաղաքացիական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունը:
- Հասարակության բևեռացումը. Սոցիալական արդարության պետական արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, աղքատության մակարդակը, մասնագիտական կրթության, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության մակարդակը, հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը անցումային շրջանի ավանդական մարտահրավերներ են: Թեև Հայաստանի Հանրապետությունը կայուն առաջընթաց է գրանցում այս ուղղություններով, այնուամենայնիվ այդ ոլորտները շարունակում են մնալ բարձր ռիսկայնության դաշտում:

- Ուրբանիզացումը. Դեռևս ԽՍՀՄ կազմում գտնվելու ժամանակաշրջանում Հայաստանում բարձր էր ուրբանիզացման մակարդակը: Այս գործընթացը շարունակվեց նաև անկախացումից հետո: Դրա հիմնական պատճառը գյուղական շրջանների և քաղաքների՝ հատկապես մայրաքաղաքի միջև աշխատանքի շուկայի, կրթական հնարավորությունների, կյանքի որակի անհամաչափությունն է: Հայաստանի հետագա ուրբանիզացումը սպառնալիք է ներկայացնում ազգային անվտանգության համար: Դա կապված է սեյսմիկ գոտիներում բնակչության խիտ բնակեցման, գյուղական շրջաններում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման, սահմանամերձ գյուղերի ամայացման վտանգների հետ:
- Շուկայական տնտեսության կայացման և ֆինանսաբյուջետային կառավարման մարտահրավերները. Արդար մրցակցային միջավայրի ձևավորման և բնական մենաշնորհների կառավարման ոչ բավարար մակարդակը, ստվերային տնտեսության և կանխիկ դրամաշրջանառության մեծ ծավալները պոտենցիալ սպառնալիք են երկրի համար: Հայաստանի Հանրապետությունը ձգտում է պահպանել տնտեսական զարգացման բարձր ցուցանիշները՝ ապահովելով անհրաժեշտ պայմաններ ազատական առևտրի, փոքր և միջին գործարարության զարգացման, ներդրումներ ներգրավելու և դրանք պաշտպանելու համար:
- Ենթակառուցվածքների ցանցի ոչ բավարար մակարդակը. Հայաստանի Հանրապետությունը շարունակում է լրացուցիչ ճանապարհների, ջրատարների, կապի համակարգերի և այլ ենթակառուցվածքների զարգացման կարիք զգալ:
- Գիտակրթական համակարգի արդյունավետության ցածր մակարդակը. Կրթությունը ավանդաբար մեծ դեր ունի Հայաստանում: Գիտակրթական համակարգի կառավարման անարդյունավետությունը, միջազգային ներգրավվածության ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը սպառնալիքներ են ազգային անվտանգության համար:
- Բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը. Հասարակության և անհատի բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի ընտանիքում և շարունակվի կրթության բոլոր մակարդակներում: Պետականության հանդեպ պատշաճ հարգանքի, առողջ ապրելակերպի, ընտանիքի ավանդական դերի նկատմամբ վերաբերմունքի դաստիարակության դեռևս ոչ բավարար մակարդակը և ազգային ինքնության աղավաղումը սպառնալիքներ են ազգային անվտանգության համար:
- Ժողովրդագրական բացասական միտումները. Հայաստանի Հանրապետությունը որպես իր ազգային անվտանգության սպառնալիք է դիտում ցածր ծնելիությունը, հիվանդացության և մահացության դեռևս ոչ ցածր և կյանքի միջին տևողության ու որակի ոչ բավարար ցուցանիշները, չկառավարվող և անօրինական արտագաղթը, հատկապես կրթական, գիտական ու մշակութային ներուժի արտահոսքը:

- Բնապահպանական խնդիրները և բնական պաշարների անարդյունավետ կառավարումը. Հայաստանի Հանրապետությունը կարևորում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Բնապահպանական անվտանգության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն Սևանա լճի պահպանումն ու դրա պաշարների զրաղետ օգտագործումը:
- Համաճարակները և աղետները. Պետության տարածքում մահաբեր համաճարակների բռնկումը, ավերիչ երկրաշարժերը և այլ բնական ու տեխնածին աղետները սպառնալիք հանդիսացող գործոններ են:

Նշված սպառնալիքների կանխման և դրանց հետևանքների վերացման, պետության և հասարակության կայուն զարգացման ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության վարած քաղաքականության հիմքում դրվում է ազգային անվտանգության ռազմավարությունը:

II.Ներքին անվտանգության ռազմավարությունը

Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պահանջում է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, ժողովրդավարական արժեքների արմատավորում, տնտեսական աճի պահպանմանն ուղղված քայլերի ձեռնարկում: Դրա անհրաժեշտության գիտակցմամբ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել համապարփակ բարեփոխումների իրագործմանը: Բարեփոխումներն իրականացվում են ազգային ինքնության պահպանման պայմանով՝ հենվելով առավելապես ազգային ներուժի վրա, օգտագործելով միջազգային հանրության փորձն ու աջակցությունը: Բարեփոխումների ձգձգումը կամ ձախողումը անմիջական սպառնալիքներ են ազգային անվտանգության համար:

Բարեփոխումների իրագործումն ապահովվում է միասնական պետական քաղաքականության իրականացմամբ: Այն արտահայտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների, միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների, օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների և դրանցից բխող նորմատիվ ակտերի համալիրի միջոցով:

1.Արդյունավետ պետական կառավարում

Նպատակներն են՝ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, քաղաքական համակարգի լիարժեք կայացումը, կայունության ապահովումը, ժողովրդավարական արժեքների և առաջին հերթին մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, քաղաքացիական հասարակության զարգացումը:

Հաստատութենական (ինստիտուցիոնալ) բարեփոխումները միտված են ժողովրդավարական պետության զորացմանը, պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության, դատական իշխանության անկախության և անաչառության ապահովմանը, տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք կայացմանը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը, կոռուպցիայի, մասնավորապես՝ կաշառակերության դեմ պայքարի ուժեղացմանը: Այս նպատակով Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է համապատասխան պետական հեռանկարային ծրագրեր, այդ թվում՝ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիր, վարչական արդարադատության համակարգի ձևավորման և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման նախագծեր:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման առաջնահերթ խնդիրներից է ճգնաժամային իրավիճակների արդյունավետ կառավարման համակարգի հաստատումը:

Որպես պետության սահմանադրական կարգի պահպանության, իրավունքի գերակայության, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովման հիմնարար խնդիր՝ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է իրավապահպանության բնագավառի ռազմավարական բարեփոխումները: Դրանք ուղղված են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովմանը, հակաիրավական ոտնձգություններից պետության, հասարակության և անհատի պաշտպանությանը:

2. Բանակաշինություն

Նպատակն է՝ պետության այնպիսի պաշտպանական ներուժի ապահովումը, որն անհրաժեշտ է հետ մղելու որևէ ագրեսիա՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի ֆիզիկական գոյությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը, պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով:
Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունն ապահովում են մարտունակ, արտաքին սպառնալիքների հետմղման խնդիրների լուծմանը մշտապես պատրաստ զինված ուժերը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի առաջնայնություններն ու նպատակները պետք է ներկայացվեն ռազմական դոկտրինի միջոցով: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը գործում են պաշտպանողական ռազմավարության սկզբունքով:
Հայաստանի Հանրապետությունը հետևողական է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների ապահովման խնդրում:
Գիտակցելով արդի մարտահրավերների նկատմամբ մեկ պետության կարողությունների սահմանափակ լինելը՝ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է ակտիվ ռազմաքաղաքական համագործակցությունը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ

արտատարածաշրջանային պետությունների հետ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մասնակցում են խաղաղության և անվտանգության ապահովման միջազգային գործողություններին:
Այս բարեփոխումներն ու համագործակցությունը իրականացվում են ի նպաստ Հայաստանի Հանրապետության շահերի և ուղղված չեն երրորդ երկրների դեմ:
3.Ազատական տնտեսություն
Նպատակներն են՝ տնտեսության կայուն աճը, մանր և միջին գործարարության զարգացումը, էներգետիկ անկախությունը, գործարարության համար առավել ազատական պայմանների ստեղծումը:
Մասնավոր սեփականության հանդեպ հարգանքն ու ձեռնարկատիրական ջիղը պատմականորեն բնորոշ են Հայաստանի ազգաբնակչությանը: Այդ յուրահատկությունները և դրանց արտացոլումը բարեփոխումների քաղաքականության մեջ նպաստավոր պայմաններ ստեղծեցին Հայաստանի տնտեսության արագընթաց աճի համար:
Հայաստանի Հանրապետությունը հատկապես կարևորում է մանր և միջին գործարարության զարգացումը և նպաստում դրա զարգացմանը՝ հաշվի առնելով դրա բացառիկ նշանակությունը ժողովրդավարական հասարակության կայացման, ինչպես նաև Հայաստանի համար ավանդական ընտանեկան կապերի պահպանման համար:
Հայաստանն իր կայուն տնտեսական առաջընթացի ապահովման գործում կարևորում է՝

- շուկայական հարաբերությունների հետագա զարգացումը,
- տնտեսության մրցունակության բարձրացումը,
- մակրոտնտեսական և ֆինանսական կայունության ապահովումը, ֆինանսական համակարգի զարգացումը,
- ֆինանսական միջնորդության խորացումը,
- մրցակցային միջավայրի բարելավումը, տնտեսության ստվերային մասի կրճատումն ու դոլարացման էական նվազեցումը,
- տնտեսության ճյուղերի մենաշնորհացման կանխումը, բնական մենաշնորհների արդյունավետ կառավարումը և վերահսկումը,
- ներդրումների խթանման հեռանկարային ծրագրի իրագործումը,
- տարածքային ու ճյուղային սոցիալ-տնտեսական զարգացման համաչափությունը, ենթակառուցվածքների արդյունավետ կառավարումը,
- տնտեսության կառուցվածքում գիտատար ճյուղերի և բնապահպանության տեսակետից մաքուր տեխնոլոգիաների կիրառման գերակայության ապահովումը,
- արտահանման խթանումը:

Հայաստանի Հանրապետությունը, կարևորելով գերատեսչական-ճյուղային բարեփոխումների համալիրը, այն նպատակաուղղում է.

էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը, ինչը ենթադրում է էներգակիրների ներմուծման ուղիների և արտադրության ձևերի բազմազանացում, նոր էներգետիկ, այդ թվում՝ միջուկային հզորությունների ստեղծում, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցում,

հանրապետության տրանսպորտային համակարգի կայուն զարգացման ապահովմանը, տարանցիկ ապրանքափոխադրումների համակարգում Հայաստանի տրանսպորտային ուղիների ներգրավմանը և դրանով իսկ՝ տրանսպորտային շրջափակման վերացմանը,

մաքուր շրջակա միջավայրի, բնական պաշարների, այդ թվում նաև՝ ջրային պաշարների ու Սևանա լճի բնահամակարգի վերականգնմանը, պահպանությանը և օպտիմալ օգտագործմանը, անտառածածկույթի պահպանմանն ու վերականգնմանը, ատոմային էներգիայի անվտանգ օգտագործմանը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների պահման համապարփակ վերահսկմանը, բնական և տեխնածին աղետների կանխատեսմանն ու վաղ ազդարարմանը, դրանց արագ արձագանքման համակարգի զարգացմանը, արտակարգ իրավիճակների բացահայտման և հաղթահարման կառույցների ստեղծմանը, բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովմանը,

բնակչության կենսաբանական անվտանգության և երկրի պարենային անվտանգության ապահովմանը, այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի ու սննդամթերքի արտադրության ավելացմանը, ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարելավմանը, սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ապահովմանը, տարածքային համալիր ծրագրերի իրականացմանը, հատկապես սահմանամերձ ու լեռնային շրջանների բնակավայրերի տնտեսական ու սոցիալական զարգացմանը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ագրարային հատվածում արտադրողականության մակարդակի բարձրացմանը:

4.Կյանքի նոր որակ և բարոյահոգեբանական մթնոլորտ

Նպատակներն են՝ աղքատության հաղթահարումը, բնակչության կենսամակարդակի հարաճուն բարձրացումը, սոցիալական արդարության արմատավորումը, հասարակության բևեռացման վերացումը, գիտակրթական համակարգի արդիականացումը, կրթության մատչելիությունը, հոգևոր-մշակութային ոլորտների շարունակական զարգացումը:

Կյանքի նոր որակ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության սոցիալական, գիտակրթական, հոգևոր-մշակութային ոլորտներում վարած քաղաքականությունը միտված է՝

- սոցիալական պետության կերտմանը և սոցիալական արդարության արմատավորմանը,
- հանրային համերաշխության հաստատմանը,

- բնակչության սոցիալական պահանջմունքների բավարարմանը, սոցիալական ենթակառուցվածքների ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովմանը,
- նոր աշխատատեղերի ստեղծմամբ և ապահովագրական համակարգի ներդրմամբ բնակչության սոցիալական վիճակի հարաճուն բարելավմանը,
- կենսաթոշակային համակարգի արդյունավետության բարձրացմանը, կենսաթոշակի նվազագույն չափի համապատասխանեցմանը կենսաբանական պահանջմունքների միջազգային չափանիշներին,
- ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը,
- տնտեսության և հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ մասնագիտական աշխատուժի, մասնավորապես՝ գիտական և գիտամանկավարժական ներուժի վերարտադրությանը:

Հայաստանի Հանրապետությունը կարևորում է՝

- Հայաստանի մտավոր ներուժի զորացմանը միտված հեռանկարային պետական քաղաքականության իրականացումը, գիտակրթական համակարգի վերակառուցումը և համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին, ուսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրումը,
- գիտական արտադրանքի ապրանքայնացումը, գիտական ներուժի ներգրավումը կենսագործունեության բոլոր, ներառյալ՝ պաշտպանական ոլորտներում դրանց արդիականացումն արդյունավետ կերպով ապահովելու նպատակով,

- «ուղեղների արտահոսքի»կանխումը,

հայոց լեզվի՝ որպես հայ ազգի լեզվամտածողության հենքի և Հայաստանի Հանրապետության պետական լեզվի դերի բարձրացումը,

մտավոր սեփականության արդյունավետ պաշտպանությունը,

- համամարդկային ու ազգային արժեքների, ազգային ավանդույթների, հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման և դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովումը,
- աջակցությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր, բարոյական, սոցիալական և մշակութային գործունեությանը,
- հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնությանն ու բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխարգելումը,
- այլ պետությունների հետ համագործակցությունը՝ նրանց տարածքում գտնվող հայկական պատմական, հոգևոր ու մշակութային արժեքների պահպանման նպատակով,

- Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանությունը,
- ներգրավումը միջազգային տեղեկատվական դաշտին, Հայաստանի և հայության մասին ճշմարտության արհեստավարժ ներկայացումը միջազգային հանրությանը, հակազդումը ապատեղեկատվությանն ու քարոզչությանը,

- «Ինտերնետ»համացանցում հայալեզու և Հայաստանին, հայագիտության բոլոր ճյուղերին և հայությանն առնչվող բովանդակության անհրաժեշտ ծավալի և որակի, ինչպես նաև դրանց համաչափության ապահովումը,

- քաղաքաշինության հարատև զարգացումը, ներառյալ՝ ներդաշնակ կենսատարածքի ձևավորումը և նպաստումը բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հատկապես Երևանում սեյսմիկ ռիսկի ծրագրված նվազեցումը,
- առողջապահության առավել արդյունավետ համակարգի ստեղծումը, որը նախատեսում է՝ առողջ ապրելակերպի արմատավորում, կեղծված դեղորայքի տարածման կանխում, հիվանդացության, հատկապես՝ ճառագայթային, սուր վարակիչ, համաճարակային հիվանդությունների, կենսաբանական ահաբեկչության ու թմրամոլության կանխարգելում, լայն տարածում ստացած հիվանդությունների վաղ հայտնաբերում, ախտորոշում ու բուժում, մայրության ու մանկության պաշտպանություն:

III. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) բնակչության անվտանգության երաշխավորի՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ և արդար կարգավորման խնդիրն ունի առանցքային նշանակություն:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն աջակցելու առաքելությունը կողմերի համաձայնությամբ վստահվել է ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ Ռուսաստանի, ԱՄՆ և Ֆրանսիայի համանախագահությամբ: Հայաստանի Հանրապետությունը կարևորում է խնդրի կարգավորման շուրջ ծավալվող քննարկումների մասնակիցների փորձագիտական բարձր մակարդակը: Հայաստանի Հանրապետությունը նպատակահարմար չի համարում խնդրի կարգավորման վերաբերյալ այլ կառույցների կողմից հայտարարությունների քննարկումն ու ընդունումը, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների ներգրավումը կարգավորման գործընթացներին:

Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հակամարտության կարգավորմանը միայն խաղաղ և փոխզիջումային ճանապարհով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման իրավական հիմքերն անխոցելի են: Մշտապես ելնելով այն սկզբունքից, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ վերջնական փաստաթուղթ պետք է ստանա նաև ղարաբաղյան կողմի հավանությունը, Հայաստանն ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված կլինեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն: Լեռնային Ղարաբաղը պետք է աշխարհագրական կապ ունենա Հայաստանի հետ: Անվտանգությունը պետք է երաշխավորված լինի:

Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված անմիջական ռազմական սպառնալիք է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը, այն է՝ այդ հիմնախնդիրը լուծել Հայաստանի նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու միջոցով: Ուստի, Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերից պահանջում է մշտական բարձր մարտական պատրաստականություն: Այս գործում Հայաստանի զինված ուժերի գլխավոր խնդիրն է Հայաստանի Հանրապետության սահմանների անձեռնմխելիության, ինչպես նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովումը:

IV.Արտաքին անվտանգության ռազմավարություն

Հայաստանն իր արտաքին անվտանգության ռազմավարությունն իրականացնում է՝ առաջնորդվելով հետևյալ գլխավոր սկզբունքներով.

Փոխլրացում

Հայաստանը միջազգային ասպարեզում հարաբերությունները կառուցում է գործընկերության հիմքի վրա՝ արդյունավետ հարաբերություններ զարգացնելով տարածաշրջանում գործող շահագրգիռ բոլոր ուժերի հետ միաժամանակ: Այն ողղված է տարածաշրջանում հավասարակշռության պահպանմանը:

Ահաբեկչության դեմ պայքարում զանգվածային ոչնչացման զենքի չտարածման խնդիրներում միջազգային հանրության համախմբումը և միջազգային կայունության արդի մարտահրավերների շուրջ մեծ տերությունների միջև ծավալված երկխոսության դրական ընթացքը ներկայումս նպաստում են Հայաստանի կողմից փոխլրացման արտաքին քաղաքականության իրականացմանը:

Ներգրավվածություն

Հայաստանը տարածաշրջանային և համաշխարհային ներգրավման գործընթացներին մասնակցող երկիր է և իրեն դիտում է որպես տարածաշրջանում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացների լիիրավ մասնակից: Ներգրավվածությունը ենթադրում է մասնակցություն միջազգային ասպարեզում ընթացող այն զարգացումներին, որոնց համահունչ են Հայաստանի որդեգրած նպատակները:

Ռուսաստանի հետ ռազմավարական հարաբերությունները, զարգացման եվրոպական ուղու որդեգրումը, ԱՄՆ և Իրանի հետ փոխշահավետ համագործակցությունը, ԱՊՀ-ին ու ՀԱՊԿ-ին անդամակցությունը, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության զարգացումը ընդլայնում են փոխլրացման քաղաքականություն վարելու ներուժը:

Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը իրականացվում է երեք հիմնական հարթություններով՝ միջազգային, տարածաշրջանային և համահայկական:

1. Միջազգային

Միջազգային գործընթացների հետ համահունչ քայլելու, դրանց դրական և բացասական միտումներին համարժեք արձագանքելու նպատակով Հայաստանը որդեգրել է միջազգային ակտիվ ներգրավման միջոցով ազգային շահերը պաշտպանելու ռազմավարությունը: Այն ենթադրում է ակտիվ մասնակցություն միջազգային արդի գործընթացներին, բազմակողմ, բազմաշերտ և երկկողմ ակտիվ քաղաքականության իրականացում:
Միջազգային ներգրավման ռազմավարությունը իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- մասնակցություն համընդհանուր նշանակության ծրագրերին, մասնավորապես՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարին և խաղաղապահ գործողություններին,
- մասնակցություն սպառազինությունների վերահսկման ռեժիմներին,
- ակտիվ ներգրավվածություն միջազգային կարևորագույն կազմակերպություններում,
- համաշխարհային ուժային կենտրոնների և տարածաշրջանային գործընթացներում ներգրավված երկրների հետ փոխհարաբերությունների զարգացում,
- մասնակցություն Եվրոպայում և հետխորհրդային տարածքում ընթացող ներգրավման գործընթացներին:

1.1. Արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչները

Երկրի անվտանգության ապահովմանն են նպատակաուղղված ինչպես Հայաստանի ռազմական ոլորտի համագործակցությունն առանձին երկրների հետ, այնպես էլ անդամակցությունն անվտանգության միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին, մասնակցությունը դրանց շրջանակներում իրականացվող միջազգային ծրագրերին: Հայաստանի անվտանգության ռազմաքաղաքական ապահովման հիմնական բաղադրիչներն են.

- Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունները, համագործակցությունը պաշտպանական և ռազմատեխնիկական ոլորտներում, երկու երկրների միջև հաստատված ռազմավարական գործընկերությունը,
- անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը,
- երկկողմ ռազմական համագործակցությունը, մասնավորապես՝ ԱՄՆ և Հունաստանի հետ,
- համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ,
- անվտանգության միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության անվտանգության մարմինների գործունեությունը, որոնցով ապահովվում է սպառազինությունների վերահսկման բաց և թափանցիկ լինելու հանգամանքը:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հիմնադիր անդամ է: Պայմանագրի նպատակն է միասնական ուժերով կանխել, իսկ անհրաժեշտության դեպքում վերացնել մասնակից պետությունների դեմ ուղղված ռազմական սպառնալիքը:

Անդամակցությունը ՀԱՊԿ-ին Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից է, որն ապահովվում է անդամ-պետությունների միջև բազմակողմ կապերի շնորհիվ: Պայմանագրի ռազմական բաղադրիչն արտոնյալ պայմաններ է ընձեռում անդամ-պետություններին ռազմատեխնիկական մատակարարումների հարցում, ինչն առաջնային կարևորություն ունի Հայաստանի համար:

ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի զարգացումը միտված է անդամ-պետությունների միջև ռազմական համագործակցության գործուն մեխանիզմների ստեղծմանն ու կայացմանը, միջազգային սպառնալիքների՝ ահաբեկչության, թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառության դեմ պայքարի արդյունավետ միջոցների ստեղծմանը, այս ասպարեզում տեղեկատվության փոխանակմանը:

Հյուսիս-Ատլանտյան դաշինքի կազմակերպություն (ՆԱՏՕ)

Հայաստանը հետամուտ է Հյուսիս-Ատլանտյան դաշինքի հետ ակտիվ և արդյունավետ հարաբերությունների զարգացմանը: ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի համագործակցությունն ընթանում է Եվրատլանտյան գործընկերության խորհրդի (ԵԱԳԽ) և «Գործընկերություն հանուն խաղաղության՝ (ԳՀԽ) ծրագրի շրջանակներում:

Ակտիվ մասնակցությունը Գործընկերության շրջանակներում կարևորվում է ոչ միայն եվրոպական անվտանգության առանցքը հանդիսացող կառույցի՝ ՆԱՏՕ-ի հետ պատշաճ մակարդակի հարաբերություններ ունենալու անհրաժեշտությամբ, այլ նաև ԱՄՆ և դաշնակից

այլ պետությունների հետ երկկողմ հարաբերությունների զարգացման, ինչպես նաև Հայաստանի եվրոպական ներգրավման քաղաքականության տեսանկյունից:

Հայաստանը ընդլայնում է քաղաքական երկխոսությունը ՆԱՏՕ-ի հետ, խաղաղապահ գործողությունների մասնակցության նպատակով կառուցում է դաշնակիցների հետ զինված ուժերի համատեղելի ստորաբաժանումներ: Հայաստանն իր խաղաղապահ զումարտակով և մի շարք այլ ուժերով մասնակցում է «Պլանավորման և վերանայման գործընթացին»:

Հայաստան-ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի»(ԱԳԳԾ) արդյունավետ իրագործումը նպաստելու է պաշտպանության համակարգի կատարելագործմանն ու արդիականացմանը, բարձրացնելու է վերջինիս արդյունավետությունը և ապահովելու է համատեղելիությունը զարգացած պետությունների պաշտպանական համակարգերի, ներառյալ՝ զինված ուժերի հետ:

1.2. Անդամակցությունը միջազգային կազմակերպություններին Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ)

1992թ. դառնալով ՄԱԿ-ի անդամ և ընդունելով համամարդկային արժեքների՝ մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության և իրավական պետության հաստատման սկզբունքները որպես պետական գաղափարախոսության անբաժանելի մաս՝ Հայաստանն ակտիվորեն մասնակցում է կազմակերպության շրջանակներում ծավալվող աշխատանքներին և համագործակցում կազմակերպության բազմաթիվ կառույցների, օժանդակ մարմինների և օղակների հետ:
Հայաստանը շարունակելու է մասնակցել և գործնական ներդրում կատարել ահաբեկչության դեմ միջազգային պայքարին և ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեությանը՝ նպաստելով անվտանգության և կայունության ապահովման միջազգային ջանքերին:
Կարևորելով միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման հարցում ՄԱԿ-ի առաջնային դերակատարությունը՝ Հայաստանը միևնույն ժամանակ համարում է, որ նոր աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում նոր մարտահրավերներին ավելի արդյունավետ արձագանքելու նպատակով ՄԱԿ-ը բարեփոխելու անհրաժեշտություն է առաջացել:

Եվրոպական կառույցներ
ա) Եվրոպական միություն (ԵՄ)

Եվրոպական կառույցների, առաջին հերթին ԵՄ-ի և նրա անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը ՀՀ արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից է:

ԵՄ-ի հետ բազմակողմ համագործակցության հետագա խորացումը դրական անդրադարձ կունենա Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման և իրավական պետության կայացման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վրա:

Եվրոպական միության՝ որպես համաշխարհային քաղաքականության և տնտեսության խոշորագույն ուժային կենտրոններից մեկի հետ հարաբերությունների զարգացումը կարևորվում է նաև առևտրատնտեսական կապերի առումով, ինչը նշանակալի գործոն է Հայաստանի տնտեսական զարգացման համար:

ԵՄ-ի կողմից հովանավորվող տարածաշրջանային ծրագրերը նպաստավոր պայմաններ են ստեղծում Հարավային Կովկասում հարատև կայունության և համագործակցության մթնոլորտի հաստատման համար: Հայաստանի ընդգրկումը «Եվրոպական հարևանության քաղաքականություն»(ԵՀՔ) ծրագրի մեջ զգալի առաջընթաց է եվրոպական ներգրավման ճանապարհին:

ԵՄ-ի հետ սերտ հարաբերությունների հաստատումը բխում է Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ շահերից:

բ) Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

Եվրոպայի խորհրդին անդամակցությունն ամրագրեց Հայաստանի տեղը եվրոպական ընտանիքում, քաղաքական, իրավական, մարդու իրավունքների ու մշակութային բնագավառներում եվրոպական չափանիշներին հետևելու երկրի ընտրությունը:

Հայաստանը կարևորում է Հարավային Կովկասում միջպետական մակարդակով և քաղաքացիական հասարակության դերակատարների միջև շփումները խթանելու Եվրոպայի խորհրդի պատրաստակամությունը, ինչը կարևոր գործոն է տարածաշրջանային համագործակցության խթանման, հակամարտությունների կարգավորման և տարածաշրջանային կայունության ապահովման համար:

գ) Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

Հայաստանի անդամակցությունը ԵԱՀԿ-ին կարևորվում է Եվրոպայի անվտանգության ու կայունության ապահովման, ժողովրդավարության և իրավական պետության չափանիշների տարածման ուղղությամբ իրականացվող աշխատանքների առումով:

ԵԱՀԿ-ն Հայաստանի համար առանձնապես կարևորվում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման տեսակետից՝ կապված այդ նպատակով ձևավորված ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության հետ:

ԵԱՀԿ-ի գործունեության երեք հիմնական՝ ռազմաքաղաքական, մարդկային և տնտեսական-բնապահպանական չափումներում Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը լրացուցիչ կարևոր գործոն է երկրի անվտանգության և կայունության համար:

Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ )

Հայաստանը ԱՊՀ կառույցի հիմնադիրներից է և նրա շրջանակներում համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման ակտիվ մասնակիցը: Դա պայմանավորված է տնտեսական, հումանիտար, քաղաքական, ռազմաքաղաքական և այլ բնագավառներում երկրի ունեցած շահերով:

ԱՊՀ-ն զգալիորեն նպաստում է անդամ երկրների միջև տնտեսական կապերի, սոցիալական և հումանիտար ոլորտներում համագործակցության զարգացմանը:

ԱՊՀ շրջանակներում ջանքեր են գործադրվում նաև մի շարք ոլորտներում համագործակցության արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ, այդ թվում՝ ռազմաքաղաքական, արտաքին սահմանների պաշտպանության ու վերահսկման, ինչպես նաև միջազգային ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների տարանցման և տարածման, ապօրինի արտագաղթի դեմ պայքարի:

Միջազգային տնտեսական կազմակերպություններ

Հայաստանը մեծապես շահագրգռված է տնտեսական համագործակցության միջազգային կառույցներում իր ներգրավմամբ և դրանց շրջանակներում ծավալվող գործունեությամբ: Այս ուղղությամբ նշանակալի ձեռքբերում է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) Հայաստանի անդամակցությունը:

Հայաստանի Հանրապետությունը սերտ և արդյունավետ համագործակցում է Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի հետ: Այդ շարունակական համագործակցությունը և նշված կառույցների կողմից Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերած աջակցությունը մեծապես նպաստել են իրականացվող բարեփոխումների արդյունավետությանը:

Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) գործունեությանը:

1.3. Արտաքին անվտանգության ապահովման երկկողմ ձևաչափը

Ռուսաստանի Դաշնություն
Կովկասի տարածաշրջանի մաս կազմող Ռուսաստանի հետ հարաբերություններն ունեն տարածաշրջանային մակարդակով չսահմանափակվող բնույթ և ներուժ: Դրանք կրում են ռազմավարական բնույթ, ինչը պայմանավորված է Հայաստանի անվտանգության ապահովման գործում Ռուսաստանի կարևոր դերով, հայ-ռուսական ավանդական բարեկամական կապերով, առևտրատնտեսական լայնածավալ համագործակցությամբ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում Ռուսաստանի ունեցած դերակատարմամբ, ինչպես նաև Ռուսաստանում հայկական ստվար համայնքի առկայությամբ:
Երկու երկրների միջև կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին»պայմանագրով և «Հայաստանի Հանրապետության

և Ռուսաստանի Դաշնության միջև 21-րդ դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին»հռչակագրով կողմերի միջև հաստատվել է ռազմավարական գործընկերություն: Նշված պայմանագրերը և պաշտպանության ոլորտում երկու երկրների սերտ համագործակցությունը, այդ թվում՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում, հանդիսանում են Հայաստանի անվտանգության համակարգի հիմնասյուներից մեկը:
Ռուսաստանի ռազմական ներկայությունը Կովկասում կարևորվում է որպես Հայաստանի անվտանգության և տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության ապահովման գործոն: Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը համատեղ մարտական հերթապահություն են իրականացնում սահմանային անվտանգության ապահովման և հակաօդային պաշտպանության բնագավառներում:
Հայաստանը մեծապես կարևորում է Ռուսաստանի հետ համագործակցությունը պաշտպանական, ռազմատեխնիկական և էներգետիկայի բնագավառներում, տրանսպորտային երթուղիների գործարկման, տարածաշրջանային կայունության և անվտանգության խնդիրներում, Հայաստանի ռուսաստանաբնակ քաղաքացիների իրավական կարգավիճակի բարելավման հարցերում:
Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների հարաբերությունները դինամիկ զարգացում են ապրում: Դա պայմանավորված է ոչ միայն համաշխարհային, տարածաշրջանային ռազմաքաղաքական և տնտեսական գործընթացներում և միջազգային հարաբերություններում ԱՄՆ կարևոր դերակատարությամբ, այլև Հայաստանին ԱՄՆ կողմից ցուցաբերվող բազմաբնույթ աջակցությամբ:
Հայաստանի Հանրապետությունը սերտորեն համագործակցում է Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ՝ երկրի ժողովրդավարական զարգացմանը միտված բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Ընդարձակ և բազմաբնույթ տնտեսական համագործակցություն է ծավալվել: Մեծ է ԱՄՆ բաժինը Հայաստանի տնտեսության մեջ ներդրումների ծավալում:
Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ՝ ԱՄՆ-ը ներգրավված է նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրում և իր նպաստն է բերում այդ ուղղությամբ տարվող միջնորդական ջանքերին: Հայաստանը կարևորում է նաև տարածաշրջանում կայունության և անվտանգության հաստատումը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության կայացմանն ուղղված ԱՄՆ կողմից գործադրվող ջանքերը:

Հայաստանը համագործակցում է ԱՄՆ հետ միջազգային ահաբեկչության դեմ պայքարում, խաղաղապահ գործողություններում, միջուկային զենքի չտարածման և համընդհանուր անվտանգության հետ կապված այլ հարցերում:
Հայ-ամերիկյան հարաբերություններում կարևոր դերակատարություն ունի հայկական Սփյուռքը, որը Միացյալ Նահանգներում ներկայացված է բազմաթիվ կազմակերպություններով և կենտրոններով:
Եվրոպական պետություններ
Եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունները Հայաստանի եվրոպական ներգրավման ընդհանուրգործընթացների մասն են կազմում: Երկկողմ հարաբերությունների օրակարգում Հայաստանը կարևորում է մեր երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման, եվրոպական ներգրավման, ղարաբաղյան հակամարտության կարգավորման և տարածաշրջանում կայունության հաստատման ու տարածաշրջանային համագործակցության զարգացման գործընթացները: Դա հնարավորություն է ընձեռում ընդարձակել առևտրային կապերը, մուտք գործել եվրոպական շուկա, խթանել Հայաստանի տնտեսության մեջ արվող ներդրումները:
Հայաստանը շահագրգռված է զարգացնելու բազմաբնույթ հարաբերությունները եվրոպական երկրների հետ՝ առաջնային համարելով քաղաքական, տնտեսական ոլորտներում երկկողմ կապերի ամրապնդումն ու ընդլայնումը: Միջազգային կազմակերպություններում համագործակցության հնարավորությունների կենսագործումը, ինչպես նաև մի շարք երկրներում մեծաթիվ հայ համայնքների առկայությունը և դրանց դրական ներուժը լրացուցիչ խթան են այդ երկրների հետ փոխշահավետ համագործակցության զարգացման համար:
Հայաստանի Հանրապետությունը կարևորում է բարեփոխումների գործընթացում Արևելյան Եվրոպայի փորձի ուսումնասիրությունը և կիրառումը:
Մերձավոր արևելք
Հայաստանի համար Մերձավոր արևելքի երկրների հետ հարաբերությունների կարևորությունը պայմանավորված է մերձավորարևելյան տարածաշրջանին հարևան լինելու հանգամանքով և այնտեղ ծավալվող գործընթացների՝ միջազգային քաղաքականության վրա ունեցած ազդեցությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ բազմաբնույթ կապերով կապված է եղել Մերձավոր արևելքի երկրների հետ, հիմնել է ստվար համայնքներ, իր գործուն մասնակցությունն է ունեցել տարածաշրջանի հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:
Հայաստանը շարունակելու է ջանքեր գործադրել Մերձավոր արևելքի իր ավանդական գործընկեր երկրների հետ համագործակցության զարգացման ուղղությամբ, նոր լիցք է հաղորդելու Պարսից ծոցի և Միջերկրականի արաբական

երկրների հետ հարաբերություններին, առևտրատնտեսական համագործակցությանը:
Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (ԱԽՏ) երկրներ
Կայուն կերպով ընդլայվում և խորանում են Հայաստանի հարաբերությունները Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ, ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ համագործակցության ուղղությամբ: Այս տարածաշրջանի հետ Հայաստանի հարաբերությունների զարգացումը կարևորվում է ԱԽՏ-ի խոշոր պետությունների, առաջին հերթին Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի միջազգային դերակատարման բարձրացմամբ, տարածաշրջանի երկրների տնտեսական ներուժով և առաջընթացով, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում նրանց հետ համագործակցելու հնարավորություններով:
2.Տարածաշրջանային
Հայաստանի անվտանգությունը գլխավորապես պայմանավորված է հարևան երկրների հետ հարաբերություններով, ինչպես նաև նրանցում և նրանց շուրջ ընթացող իրադարձություններով:
Հայաստանը մշտապես հանդես է գալիս տարածաշրջանային համագործակցության միջավայրի ձևավորման, անվտանգության համակարգի ստեղծման, հարևան պետությունների միջև կառուցողական հարաբերությունների հաստատման օգտին: Տարածաշրջանում առկա են չկարգավորված հակամարտություններ, տարաձայնություններ հարևանների հետ: Չեն ձևավորվել կայունության, անվտանգության, հաղորդակցության ուղիների և տնտեսական համագործակցության համընդհանուր ու միասնական համակարգեր:
Երկխոսության և համագործակցության ճանապարհով է հնարավոր լուծել տարածաշրջանային հակամարտությունները, հարթել հակասություններն ու պատմական կնճիռները, կանխել տարածաշրջանում բաժանարար գծերի առաջացումը և դրանց բացասական հետևանքները:
Հայաստանի անվտանգության ապահովման տարածաշրջանային ռազմավարությունը նպատակաուղղված է.

- տարածաշրջանային կայունության ամրապնդմանը, երկկողմ և բազմակողմ փոխշահավետ համագործակցության զարգացմանն ու ծավալմանը,
- Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացմանը և համագործակցության բազմաբնույթ ծրագրերի կենսագործմանը,
- ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծմանը, Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանը,
- Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը,

- տարածաշրջանում ժողովրդավարական արժեքների տարածմանն ու առավել խորացմանը,
- տարածաշրջանում իրականացվող միջազգային տնտեսական ծրագրերին Հայաստանի մասնակցության ապահովմանը:

2.1. Արտաքին անվտանգության ապահովման երկկողմ ձևաչափ

Իրանի Իսլամական Հանրապետություն

Հայաստանի համար Իրանի հետ ավանդական բարիդրացիական հարաբերությունների զարգացումը պայմանավորված է էական նշանակություն ունեցող մի շարք օբյեկտիվ գործոններով՝ հարևանության հանգամանքով, պատմամշակութային կապերով, փոխադարձ տնտեսական շահերով:

Իրանի տարածքով են անցնում Հայաստանն արտաքին աշխարհին կապող տրանսպորտային երթուղիները: Հարևան երկու երկրների կողմից տնտեսական և տրանսպորտային շրջափակման պայմաններում կարևորվում է Իրանի՝ որպես դեպի Ասիա և Միջին արևելք ռազմավարական նշանակության ճանապարհ ապահովող երկրի դերը:

Փոխգործակցում են երկու երկրների էներգետիկ համակարգերը, իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է Հայաստանի էներգետիկ անվտանգության այլընտրանքային աղբյուրների ապահովումը:

Իրանի հետ հարաբերությունները Հայաստանի համար արժևորվում են նաև այն հանգամանքով, որ վերջինս, հանդիսանալով տարածաշրջանի և իսլամական աշխարհի ծանրակշիռ ներկայացուցիչ, ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում հիմնականում հանդես է բերում հավասարակշռված մոտեցում:

Իրանի հետ տնտեսական համագործակցությունը Հայաստանը շարունակելու է զարգացնել էներգետիկայի, առևտրի ծավալների մեծացման, հաղորդակցության նոր ուղիների ձևավորման և արդեն առկա ներուժի արդյունավետ օգտագործման ուղղություններով:

Հայաստանը կարևորում է Իրանի ներգրավվածությունը Հարավային Կովկասում ընթացող տարաբնույթ գործընթացներում և այն դիտարկում որպես կայունության և հավասարակշռության պահպանման գործոններից մեկը:

Վրաստան

Հայաստանի և Վրաստանի փոխհարաբերությունները ավանդաբար բարեկամական են և իրենց նշանակալի նպաստն են բերում տարածաշրջանում կայունության պահպանման գործին:

Վրաստանը կարևորվում է որպես տարածաշրջանում Հայաստանի հետ բարձր մակարդակի հարաբերություններ ունեցող պետություն, և տարբեր ոլորտներում փոխշահավետ

համագործակցության զարգացումն ու դրանց խորացումը բխում է Հայաստանի և Վրաստանի ռազմավարական երկարաժամկետ շահերից:

Հայաստանը մեծապես շահագրգռված է Վրաստանի կայուն և անվտանգ զարգացմամբ, ինչպես նաև առկա հակամարտությունների խաղաղ և ամբողջական կարգավորմամբ: Դա կնպաստի Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարանցիկ ուղիների անվտանգ և վստահելի օգտագործմանը, ինչպես նաև ողջ տարածաշրջանի համար մեծ նշանակություն ունեցող Թբիլիսի-Սուխումի երկաթգծի վերաշահագործմանը:

Վրաստանը Հայաստանի համար կարևորվում է նաև այդ երկրում բնակվող մեծաքանակ հայ համայնքի առկայության հանգամանքով: Հայաստանի Հանրապետությունը համագործակցում է Վրաստանի կառավարության հետ վրացահայության, այդ թվում՝ Ջավախքի երկրամասի հայ համայնքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Թուրքիայի Հանրապետություն

Հայաստանը և Թուրքիան չունեն դիվանագիտական հարաբերություններ: Դրանց խոչընդոտող հանգամանքներն են Թուրքիայի կողմից Հայաստանին ներկայացվող մի շարք նախապայմանները:

Հայաստանը հանդես է գալիս Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատման օգտին և շարունակելու է ձեռնարկել համապատասխան քայլեր խոչընդոտների հաղթահարման, երկկողմ հարաբերությունների բարելավման ուղղությամբ:

Հետամուտ լինելով Հայոց ցեղասպանության համընդհանուր, մասնավորապես՝ Թուրքիայի կողմից ճանաչմանը և դատապարտմանը, Հայաստանն այն դիտարկում է ոչ միայն պատմական արդարության վերականգնման, այլև տարածաշրջանում փոխադարձ վստահության մթնոլորտի բարելավման և ապագայում նման ոճիրների կանխարգելման համատեքստում:

Հայ-թուրքական հարաբերությունների չկարգավորված բնույթը, մասնավորապես՝ փակ սահմանը, Հայաստանի ազգային անվտանգության համար ստեղծում է սպառնալիքներ և խոչընդոտում Հայաստանի կայուն զարգացման գործընթացին: Այդ հարաբերությունների չկարգավորվածությունն իր անմիջական բացասական ազդեցությունն է ունենում նաև տարածաշրջանում կայունության ամրապնդման, տարածաշրջանային համագործակցության զարգացման վրա:

Փոխհարաբերությունների կարգավորման արդյունքում կնվազեն տարածաշրջանում բաժանարար գծերի ձևավորման վտանգները, բարենպաստ մթնոլորտ կստեղծվի նաև ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորման շուրջ:

Հայաստանի Հանրապետությունն ուշադրությամբ հետևում է ԵՄ-ին անդամակցելու Թուրքիայի ցանկության կապակցությամբ նրա հետ վարվող բանակցությունների գործընթացին: Հայաստանը կարևորում է այդ գործընթացում երկակի չափանիշների կիրառման բացառումը և համարում է, որ բանակցությունների վարման կարևոր պայման պետք է լինի Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակման վերացումը, ինչը հատկապես արդիական է եվրոպական հարևանության քաղաքականությանը Հայաստանի անդամակցելու համատեքստում:

Ադրբեջանի Հանրապետություն

Հայաստանի և Ադրբեջանի միջև դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվել, ինչը պայմանավորված է ղարաբաղյան հակամարտությամբ: Ադրբեջանը որդեգրել է տարածաշրջանային համագործակցության ծրագրերից Հայաստանին մեկուսացնելու քաղաքականություն:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Հայաստանի դիրքորոշման վրա ներազդելու նպատակով Ադրբեջանը հրաժարվում է ինչպես միմյանց կապող տրանսպորտային երթուղիների շահագործումից, այնպես էլ երկու երկրների միջև տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում համագործակցության եզրեր փնտրելու Հայաստանի և միջազգային հանրության առաջարկություններից:

Հայաստանը համարում է, որ տարածաշրջանային և սահմանային համագործակցությունը՝ որպես փոխվստահության մթնոլորտի ստեղծման և ամրապնդման միջոց, նշանակալի դրական ազդեցություն կարող է ունենալ: Հայաստանը շարունակելու է ջանքեր գործադրել հակամարտության կողմերի միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորման ուղղությամբ և այդ նպատակով խրախուսելու է տարբեր մակարդակներով համագործակցությունը, շփումներն ու փոխայցելությունները:

3.Հայաստան-Սփյուռք հարաբերություններ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կարևոր յուրահատկություններից է Սփյուռքին առնչվող խնդիրների համալիրը: Հայկական Սփյուռքն իր թվաքանակով գերազանցում է Հայաստանի բնակչությանը, սփռված է ողջ աշխարհով և մեծ մասամբ ցեղասպանության ու բռնի տեղահանման արդյունք է: Սփյուռքը բնորոշվում է տարբեր պետություններում բարձր մակարդակի ներգրավվածությամբ, պետական և հասարակական կյանքում զգալի դերակատարությամբ: Հատկապես մեծ համայնքներ կան ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իրանում, Վրաստանում և մի շարք արաբական երկրներում: Սփյուռքահայության մեծ մասը այլ պետությունների քաղաքացի է:

Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման նպատակով Հայաստանի Հանրապետության ջանքերն ուղղված են ինչպես Սփյուռքի ուծացմանը դիմակայելուն և լեզվամշակութային

ինքնության կորստի կանխմանը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը Սփյուռքի համակարգված մասնակցության ապահովմանը:

Սփյուռքի ներգրավումը Հայաստանի համար ունի նաև տնտեսական ու մշակութային մեծ նշանակություն, քանի որ խթանում է մասնավորապես առևտուրը, զբոսաշրջությունը, ազգային մշակութային արժեքների պահպանումը, զարգացումն ու տարածումը:

Սփյուռքի հետ կապերն առանձնահատուկ դեր ունեն Հայաստանի զարգացման համար, քանի որ Սփյուռքը մի յուրօրինակ կամուրջ է Հայաստանի և միջազգային հանրության միջև: Սփյուռքի տարբեր բնագավառների կազմակերպությունները զգալիորեն նպաստում են տվյալ երկրների հետ Հայաստանի երկկողմ կապերի զարգացմանը, Հայաստանի միջազգային ներգրավմանը և Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանը:

Հայության ներգրավման ու զարգացման համատեքստում՝ որպես ազգային եկեղեցի, կարևոր առաքելություն ունի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Եզրափակիչ դրույթներ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվում է որպես ուղեցույց պետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղությունները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները ներկայացնելու համար: Ռազմավարության դրույթների վերանայման հաճախականությունը պայմանավորված է երկրում, տարածաշրջանում և աշխարհում ընթացող դինամիկ գործընթացներով, իրավիճակի և քաղաքական գերակայությունների փոփոխություններով:

Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև պետական պաշտոնյաների կողմից ի պաշտոնե արվող հայտարարություններում պարտադիր է պահպանել ազգային անվտանգության ռազմավարության մեջ բերված ձևակերպումների ու դիրքորոշումների ոգին:

Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական կառավարման մարմինների կողմից միասնական քաղաքականության իրագործումն ապահովելու նպատակով ընդունվող որոշումները պետք է համահունչ լինեն ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթները կենսագործվում են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական, ռազմական, տնտեսական, պարենային, էներգետիկ, բնապահպանական, հաղորդակցական և տեղեկատվական անվտանգության, ժողովրդագրական, գիտակրթական, հոգևոր-մշակութային զարգացումների հայեցակարգերի և դրանցից բխող նպատակային ծրագրերի հիման վրա, որոնք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ, 86-

րդ և 89-րդ հոդվածների պահանջներից ելնելով, մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Ներածություն. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» հասկացությունը. 1

I. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, դրանց դեմ ուղղված սպառնալիքները. 2

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքները 2
Ազգային անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները 2
Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները. 4

II. Ներքին անվտանգության ռազմավարությունը. 8

Արդյունավետ պետական կառավարում. 8
Բանակաշինություն. 9
Ազատական տնտեսություն. 10
Կյանքի նոր որակ և բարոյահոգեբանական մթնոլորտ.. 11

III. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. 13
IV. Արտաքին անվտանգության ռազմավարություն. 14

Միջազգային. 14

1.1. Արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչները. 15

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ) 15
Հյուսիս-Ատլանտյան դաշինքի կազմակերպություն (ՆԱՏՕ) 16

1.2. Անդամակցությունը միջազգային կազմակերպություններին. 16

Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ) 16
Եվրոպական կառույցներ. 17

ա) Եվրոպական միություն (ԵՄ) 17
բ) Եվրոպայի խորհուրդ (ԵԽ) 17
գ) Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ) 17
Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ ) 18
Միջազգային տնտեսական կազմակերպություններ. 18

1.3. Արտաքին անվտանգության ապահովման երկկողմ ձևաչափը. 18

Ռուսաստանի Դաշնություն. 18
Ամերիկայի Միացյալ Նահանգներ. 19
Եվրոպական պետություններ. 20
Մերձավոր արևելք. 20
Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ. 21

2. Տարածաշրջանային. 21

2.1. Արտաքին անվտանգության ապահովման երկկողմ ձևաչափ.. 22

Իրանի Իսլամական Հանրապետություն. 22

Վրաստան. 22

Թուրքիայի Հանրապետություն. 23

Ադրբեջանի Հանրապետություն. 23

3. Հայաստան-Սփյուռք հարաբերություններ. 24

Եզրափակիչ դրույթներ. 25
Վերև

28.11.2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ զեկուցումը ՀՀ ԶՈՒ-ի հրամանատարական կազմի համար

16 փետրվարի 2005 թ.

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հայաստանը և միջազգային հանրությունը

II. ՀՀ ազգային անվտանգության հիմնադրույթները

- Հայաստանի ազգային անվտանգությունը
- Հայաստանի ազգային անվտանգության երաշխիքը
- Հայաստանի ազգային անվտանգության ապահովումը
- Հայաստանի ազգային անվտանգության համար սպառնալիքները

III. Հայաստանի ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերները. ազգային անվտանգության ապահովման ռազմավարությունը

- արտաքին համաչափ վտանգներ
- արտաքին անհամաչափ վտանգներ
- ներքին համաչափ վտանգներ
- ներքին անհամաչափ վտանգներ

1. Հայաստանի ներքին անվտանգության ռազմավարությունը

ա) միջազգային ինտեգրում ժողովրդավարացման միջոցով
բ) օրենսդրական բարեփոխումներ
գ) ինստիտուցիոնալ բարեփոխումներ
դ) տնտեսական բարեփոխումներ
ե) սոցիալական բարեփոխումներ

2. Հայաստանի արտաքին անվտանգության ռազմավարությունը

2.1 տարածաշրջանային մակարդակ

ա) Հարաբերությունները Վրաստանի հետ
բ) Հարաբերությունները Իրանի հետ
գ) Հարաբերությունները Թուրքիայի հետ
դ) Հարաբերությունները Ադրբեջանի հետ. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը

2.2 միջազգային մակարդակ

ա) Ռազմավարությունը հետխորհրդային տարածքում. ԱՊՀ/ՀԱՊԿ

բ) Եվրոպական ինտեգրում

- Եվրոպայի խորհուրդ
- ԵԱՀԿ

- Եվրոպական միություն
- ՆԱՏՕ

գ) Հարաբերությունները առաջատար երկրների հետ

- Ռուսաստանի Դաշնություն
- ԱՄՆ

3. Համահայկական ինտեգրման ռազմավարությունը
4. Պաշտպանական բարեփոխումների ռազմավարությունը

IV. Ամփոփում. Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության գերակայությունները

Պարոնա՛յք գեներալներ, սպաներ
Այսօր ես կխոսեմ ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշների մասին: Գաղտնիք չէ, որ ազգային անվտանգության ապահովումը պետության գերխնդիրն է, նրա հիմնական գործառույթը, մինչդեռ այսօր Հայաստանի առանձին պետական գործիչներ, իշխանության տարբեր օղակներ, հասարակական և քաղաքական կառույցներ ազգային անվտանգության ապահովման առանձին ոլորտներում իրականացվող ռազմավարության առնչությամբ բազմիցս արտահայտել են տարբեր տեսակետներ: Կարծում եմ, որ ժամանակն է ավելի համակարգված ձևով մշակելու ազգային անվտանգության հայեցակարգային հիմնադրույթները, քանի որ ազգային անվտանգության ռազմավարությունը ոչ միայն հստակեցնում է ազգային շահերը, պետության առջև ծառացած սպառնալիքները և դրանց չեզոքացման ուղիները, այլև, վերջին հաշվով, կանխագծում է տեսանելի ապագայում պետության զարգացման ուղղվածությունն ու բովանդակությունը:

I. Հայաստանը և միջազգային հանրությունը

20-րդ դարը միջազգային հարաբերությունների ասպարեզում եզրափակվեց գաղափարական սկզբունքային հակամարտության և «սառը պատերազմի» ավարտով: Դրա արդյունքը եղավ այն, որ միջազգային դաշինքների, առանձին պետությունների և տարբեր կառույցների անվտանգության ապահովման վերաբերյալ ավանդական տեսակետներն ու պատկերացումները կորցրին իրենց արդիականությունը: Միջազգային հանրությունը 21-րդ դար թևակոխեց լայն շրջանակներում տեղի ունեցած համակարգային փոփոխություններով և անցումային ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկություններով: Վերջին տարիներին ի հայտ են գալիս այնպիսի երևույթներ, որոնք, հանդես գալով որպես միջազգային հարաբերությունները բնորոշող գործոններ, իրենց վտանգավորության գլոբալ, համընդգրկուն բնույթով ազդում են միջազգային անվտանգության կառույցների ու ռազմաքաղաքական ուժերի վրա՝ նրանց

պարտադրելով վերանայել իրենց ռազմավարական նպատակները և վերակառուցել գործունեությունը: Օրինակ՝ միջազգային ահաբեկչությունը, լինելով միջազգային անվտանգությանն ուղղված առաջնային սպառնալիք, ներգործում է տարբեր պետությունների, միջազգային անվտանգության համակարգերի զարգացման, ընդլայնման, վերակառուցման և, առաջին հերթին, ինտեգրման գործընթացների արագացման վրա: Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի այնպիսի տարածաշրջանում, որտեղ առկա են անցումային ժամանակաշրջանին բնորոշ բոլոր զարգացումները: Խորհրդային Միության փլուզումից հետո այստեղ ի հայտ եկան անվտանգության ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային սպառնալիքներ: Եթե ներտարածաշրջանային սպառնալիքներն առավելապես պայմանավորված են ազգամիջյան հակամարտությունների, զինված բախումների առկայությամբ, ապա արտատարածաշրջանային սպառնալիքները հետևանք են այն ռազմաքաղաքական վակուումի, որը փորձում են լրացնել տարաբնույթ շահերի հետամուտ արտատարածաշրջանային ուժերը: Որպես Արևելքի և Արևմուտքի, Եվրոպայի և Ասիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրամիության շահերի հանգուցակետ՝ հարավկովկասյան տարածաշրջանը կրում է այդ շահերի համադրման ու մրցակցության ազդեցությունը: Այդ պատճառով անվտանգության ապահովման բնագավառը և այստեղ ընթացող զարգացումները նկատելիորեն քաղաքականացված են և, թերևս, առաջնահերթ նշանակություն ունեն մեր տարածաշրջանի երկրների համար: Վերջին շրջանում այդ միջազգային ռազմաքաղաքական գործընթացների ազդեցությունն սկսել է Հարավային Կովկասում էապես ուժգնանալ, ինչի հետևանքով տարածաշրջանում ակտիվացել է շահագրգիռ ուժերի, գերտերությունների, անվտանգության համակարգերի գործունեությունը: Դա պայմանավորված է հակաահաբեկչական պայքարի, Իրաքում ծավալված ռազմական գործողությունների, ՆԱՏՕ-ի, Եվրամիության ընդլայնման գործընթացների, ԱՊՀ/ՀԱՊԿ շրջանակներում ընթացող ինտեգրման զարգացումների գործոններով: Հայաստանը ներգրավված է տարածաշրջանային և միջազգային նշված բոլոր զարգացումներում: Մեր երկրի անվտանգ ապագայի կառուցումը մենք տեսնում ենք միջազգային և տարածաշրջանային անվտանգության միջավայրում, քանզի Հայաստանի անվտանգությունը, իր ներպետական նշանակությունից բացի, նաև միջազգային և տարածաշրջանային անվտանգության անբաժան մասն է: Այս առումով Հայաստանի անվտանգության ապահովման հիմնադրույթները, ռազմավարությունը և առկա խնդիրները, հիմնված լինելով համընդհանուր ժողովրդավարական արժեքների վրա, միտված են միջազգային և տարածաշրջանային ինտեգրման նպատակներին:

## II. ՀՀ ազգային անվտանգության հիմնադրույթները

Անշուշտ, նշված բոլոր բազմատարր զարգացումների և տարածաշրջանային անվտանգության միջավայրը ձևավորող հիմնական ազդակների վերլուծությունը կարևոր է. Հայաստանի Հանրապետությունը և հայ հասարակությունը ապրում և զարգանում են

այդ միջավայրում, այստեղ են կերտում իրենց ապագան: Սակայն Հայաստանի ներկան գնահատելու և ապագան կառուցելու համար հիմնարար նշանակություն ունի ազգային անվտանգության հետևյալ հիմնադրույթների հստակ պատկերացումը:
Ինչ է նշանակում՝ Հայաստանի ազգային անվտանգություն.
Հայաստանի ազգային անվտանգությունը Հայաստանի Հանրապետության և հայ հասարակության անվտանգ գոյությունն է որպես սոցիալական-իրավական պետության և քաղաքացիական հասարակարգի:
Որն է ազգային անվտանգության երաշխիքը.
Հայաստանի ազգային անվտանգության երաշխիքը համընդհանուր ժողովրդավարական արժեքների՝ պետության, հասարակության և անհատի ու նրա հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության գործուն համակարգն է:
Ինչ է ազգային անվտանգության ապահովումը.
Հայաստանի ազգային անվտանգության ապահովումը պետության գոյությանն սպառնացող վտանգների որոշումն է (գնահատումը), դրանց կանխարգելումն ու չեզոքազացումը, ինչպես նաև երկրի կայուն զարգացման երաշխավորումը:
Որոնք են ազգային անվտանգության համար հիմնական սպառնալիքները.
Հայաստանի ազգային անվտանգության համար հիմնական սպառնալիքներն են՝ ժողովրդի ֆիզիկական գոյությանը, Հայաստանի տարածքային ամբողջականությանն ու անկախությանն սպառնացող վտանգները, ինչպես նաև երկրի կայուն զարգացման խաթարումը՝ մեկուսացման հետևանքով «չկայացած պետություն» համարվելու հեռանկարով:
Այս հիմնարար դրույթների վրա է խարսխվում Հայաստանի ազգային անվտանգության ապահովման ռազմավարությունը:

III. Ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերները. ազգային անվտանգության ապահովման ռազմավարությունը

Կայուն և շարունակական զարգացման միջոցով սոցիալական և իրավական պետության կառուցման, համընդհանուր ժողովրդավարական արժեքների պաշտպանության գործընթացում ի հայտ են գալիս Հայաստանի զարգացմանը խոչընդոտող, մեր ազգային անվտանգությանն սպառնացող բազմաթիվ մարտահրավերներ և վտանգներ: Դրանք դրսևորվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական դաշտում, առնչվում պետության զարգացման բոլոր բնագավառներին և ունեն համաչափ (սիմետրիկ) կամ անհամաչափ (ասիմետրիկ) բնույթ*:
Արտաքին համաչափ վտանգներն են՝ ժողովրդի ֆիզիկական գոյության, պետության անկախության և տարածքային ամբողջականության նկատմամբ հնարավոր ոտնձգությունները, Ղարաբաղյան հակամարտության հիմնախնդրի ռազմական լուծման նպատակով Ադրբեջանի կողմից մարտական գործողությունների վերսկսումը, Հայաստանի շրջափակումը, թշնամական պետությունների կողմից Հայաստանի

քաղաքական, տնտեսական ու հաղորդակցային մեկուսացումը և այդ պատճառով նրա միջազգային դերի նվազումը՝ մարգինալացումը, մեր երկրին առնչվող բարեկամական դաշինքների թուլացումը կամ քայքայումը, ինչպես նաև ոչ բարեկամական ռազմաքաղաքական դաշինքների ստեղծումն ու կայացումը, թշնամական պետությունների կողմից ապատեղեկատվությունը՝ ուղղված Հայաստանի կենսական ու ռազմավարական շահերի դեմ, և Հայաստանի շուրջ միջազգային բացասական կարծիքի ձևավորումը:
Արտաքին անհամաչափ վտանգներն են՝ թշնամական ոչ կանոնավոր ռազմական ուժի գործունեությունը՝ ուղղված Հայաստանի դեմ, Հայոց Սփյուռքի դերի անկումը նրա ուծացման, ինքնության կորստյան հետևանքով, միջազգային, այդ թվում՝ համակարգչային-տեղեկատվական, ահաբեկչությունը:
Ներքին համաչափ վտանգներն են՝ իրավական ու սոցիալական պետության և քաղաքացիական հասարակարգի անհրաժեշտ բնութագրերի ձևավորման ոչ բավարար որակն ու տեմպերը, պետական համակարգի անկատարությունը կամ չկայացումը, արդարադատության և ներքին անվտանգության մարմինների գործունեության անբավարար մակարդակը, ներքին հաղորդակցությունների ու կապի, ինչպես նաև պետական տեղեկատվական-քարոզչական հնարավորությունների անկումը:
Ներքին անհամաչափ վտանգներն են՝ սոցիալական շերտավորման խորացումը և աղքատությունը, կոռուպցիան և կաշառակերությունը, հասարակական հարաբերությունների հնարավոր քրեականացումը, պետական համակարգի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության գործում ոչ պետական կազմակեպությունների դերի նվազումը, իշխանությունների հանդեպ հասարակական անվստահությունը, հասարակության ազդեցիկ հատվածների միջև անհանդուրժողության մթնոլորտի առկայությունը, իշխանությունների դեմ ուղղված հնարավոր խռովությունները, ժողովրդագրական գործընթացների բացասական միտումները և արտագաղթը, խոսքի ազատության պակասը և լրատվամիջոցների տեղեկատվական-քարոզչական հնարավորությունների նվազումը, կրթական ու գիտական ներուժի արտահոսքը, հոգևոր և բարոյական արժեքների խաթարումը, բնական-էկոլոգիական աղետները, մահաբեր համաճարակները:
Նշված վտանգների չեզոքացման ուղղությամբ Հայաստանի վարած քաղաքականության հիմքում դրվում է ազգային անվտանգության ռազմավարությունը:

1. Հայաստանի ներքին անվտանգության ռազմավարությունը

   Մեր երկրի ներքին անվտանգության ապահովումը առաջին հերթին պայմանավորված է պետության, հասարակության գոյության և կենսագործունեության բոլոր բնագավառներում ժողովրդավարական արժեքների ամրագրմամբ: Դրա անհրաժեշտության և մեր երկրի անվտանգ ապագայի կառուցման կարևորության գիտակցմամբ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է բարեփոխումների

ռազմավարությունը: Այն իրականացնելիս Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում է իր պետական-ազգային շահերով, որոնք միջազգային հանրության օժանդակությամբ ու նրա կուտակած հսկայական փորձի օգտագործման միջոցով ծառայեցնում է մեր պետության ու հասարակության կայացման և ազգային ինքնության պահպանման պայմանով՝ միջազգային ինտեգրման գործին:
Ժողովրդավարական բարեփոխումների ռազմավարությունը նպատակաուղղված է ներքին վտանգների կանխարգելմանը և նախատեսում է ժողովրդավարական արժեքների ներթափանցում պետական ու հասարակական բոլոր ոլորտներ, այդ թվում՝ անվտանգության ապահովման բնագավառ: Միաժամանակ ժողովրդավարական բարեփոխումները Հայաստանի թե՛ ներքին, թե՛ արտաքին անվտանգության երաշխիքն են:
ա) միջազգային ինտեգրում ժողովրդավարացման միջոցով
Հայաստանի միջազգային ինտեգրում ժողովրդավարացման միջոցով. ահա սա է մեր պետական-ազգային շինարարության գերնպատակը, կայուն զարգացման և անվտանգ ապագայի կերտման բանալին, ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքների չեզոքացման առանցքային ուղին:
Ժողովրդավարական բարեփոխումների ռազմավարությունը համակարգված կառուցողական աշխատանք է պահանջում պետական մարմիններից, իշխանության բոլոր օղակներից և հասարակությունից: Բարեփոխումների ձախողումը կնշանակի անմիջական և համապարփակ սպառնալիք ազգային անվտանգության ապահովմանը, քանի որ կարող է խաթարել երկրի կայուն զարգացումը և իրականություն դարձնել այսպես կոչված «չկայացած պետության» վիճակում հայտնվելու վտանգը: Տվյալ վտանգի աղետալի հետևանքը կարող է լինել «չկայացած պետության» հանդեպ միջազգային հանրության վերաբերմունքի վատթարացումը և, որպես հետևանք, նրա մեկուսացումը:
Այսպիսով՝ ժողովրդավարական բարեփոխումների միջոցով Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման քաղաքականությունը ազգային անվտանգությունն ապահովող, պետականորեն որդեգրված ռազմավարություն է, որը պետության առջև ծառացած խնդիրները լուծում է ըստ իրենց առաջնահերթության համակարգված ծրագրերի մշակման ու իրագործման միջոցով:
բ) Օրենսդրական բարեփոխումներ
Օրենսդրական բարեփոխումները բարեկեցիկ ու կայուն քաղաքացիական հասարակության կայացման նախապայմանն են, քանզի կոչված են օրինապատշաճորեն կարգավորելու պետության, հասարակության և անհատի գործունեության բոլոր բնագավառները: Բացի այդ, օրենսդրական բարեփոխումները, Հայաստանի օրենսդրությունը համապատասխանեցնելով միջազգային ժողովրդավարական չափանիշներին, նպաստում են ազգային ինքնության

պահպանմանը և միջազգային ինտեգրման միջոցով երկրի շարունակական զարգացմանը:
Հայաստանում ժողովրդավարական արժեքները դեռ նոր են ձևավորվում, և մենք չենք կարող բարեփոխումներն իրականացնել միայնակ: Ժողովրդավարական կայացած պետությունները՝ ԱՄՆ-ը, Եվրամիության երկրները, տասնյակ տարիներ ստեղծագործել ու տքնել են այս ասպարեզում: Ուստի և մենք որդեգրել ենք այդ երկրների հետ սերտ համագործակցության ուղեգիծը: Այսօր Հայաստանն իր օրենսդրական դաշտը ձևավորում է Եվրոպական կառույցների՝ Եվրամիության, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ, այս բնագավառում եվրոպական առաջատար ինստիտուտների, մասնավորապես՝ «Իրավունքի միջոցով դեպի ժողովրդավարություն» Վենետիկյան հանձնաժողովի օժանդակությամբ և հովանավորությամբ: Մեզ անգնահատելի խորհրդատվական օժանդակություն են ցուցաբերում ԱՄՆ-ը և Ֆրանսիան:
Հայաստանը հաստատակամ է իր միջազգային գործընկերների հետ օրենսդրական բարեփոխումների անընդհատ գործընթացը զարգացնելու մեջ: Այս առումով վճռական դերակատարություն ունեն սահմանադրական բարեփոխումները:
գ) Ինստիտուցիոնալ բարեփոխումներ
Ինստիտուցիոնալ բարեփոխումները միտված են պետական կառավարման մարմինների շինարարության համակարգմանը, նրանց թափանցիկ գործունեության ապահովմանը, կոռուպցիայի և կաշառակերության վերացմանը, հասարակական վերահսկման ժողովրդավարական արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը: Այս նպատակով Հայաստանի Հանրապետությունը միջազգային հանրության օժանդակությամբ ծավալում է բազմաթիվ պետական հեռանկարային ծրագրեր: Դրանցից են Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, Կոռուպցիայի դեմ պայքարի կառավարական ծրագիրը և այլն:
Հայաստանի Հանրապետության առաջնահերթություններից է ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով հասարակական դաշտի ձևավորումը և հասարակության համախմբումը տնտեսական, քաղաքական ու սոցիալական զարգացման ազգային ծրագրերի շուրջ: Այդ նպատակով Հայաստանը համագործակցում է մի շարք եվրոպական հասարակական կազմակերպությունների հետ, իրականացնում բազմաթիվ հասարակական-ուսուցողական ծրագրեր:
դ) Տնտեսական բարեփոխումներ
Տնտեսական բարեփոխումների նպատակներն են՝ ազատական տնտեսության կառուցումը, ազատ շուկայական հարաբերությունների հաստատումը, մանր ու միջին բիզնեսի զարգացումը, բիզնեսում հավասար մրցակցային դաշտի ապահովումը, տնտեսության առաջատար ու գիտատար ճյուղերի զարգացումը, էներգետիկայի և հաղորդակցման այլընտրանքային հնարավորությունների ստեղծումը, առաջադեմ

շուկայական տնտեսության աջակցմանը միտված ազգային ֆինանսավարկային քաղաքականության մշակումը և այլն:
Տնտեսական բարեփոխումների ասպարեզում Հայաստանը կարևոր տեղ է հատկացնում բարենպաստ ներդրումային դաշտի ձևավորմանը, կապիտալի ներհոսքի խրախուսմանը, արտահանման ծավալների ավելացմանը, այդ նպատակով մաքսային և հարկային հստակ քաղաքականության իրականացմանը, ինչը միտված է Հայաստանի տնտեսության Եվրոինտեգրմանը:
ե) Սոցիալական բարեփոխումներ
Սոցիալական բարեփոխումների հիմնական նպատակը սոցիալական ապահովության մեխանիզմների կիրառումն է՝ սոցիալական, ապահովագրական հիմնադրամների ստեղծում, բնակչության սոցիալական վիճակի բարելավում, աշխատատեղերի ստեղծում, սոցիալական արդարության հաստատում: Հայաստանում ծրագրվող սոցիալական բարեփոխումներն անմիջականորեն առնչվում են ազգային շինարարության մյուս բոլոր բնագավառներին և առաջին հերթին՝ հասարակարգի տնտեսական, օրենսդրական և ինստիտուցիոնալ զարգացմանը: Հայաստանում ժողովրդի բարեկեցությանը նպատակաուղղված ռազմավարական ձեռնարկումների անհրաժեշտությունը հիմնված է այն ճշմարտության վրա, որ քաղաքացու նվիրվածությունը ազգ-պետության անվտանգությանը զգալի չափով պայմանավորված է իր սոցիալական պաշտպանվածության մակարդակով:

2. Հայաստանի արտաքին անվտանգության ռազմավարությունը

Հայաստանի արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը միջազգային ինտեգրումն է: Մենք լավ ենք գիտակցում, որ ինտեգրման արդի գործընթացներով բնորոշվող աշխարհակարգում առանձին պետությունների ազգային անվտանգության ապահովումը հնարավոր չէ զուտ ներպետական ազգային նպատակների ու ներուժի իրացմամբ: Հայաստանի արտաքին անվտանգությունը շաղկապված է միջազգային ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումներին, որոնք անմիջականորեն ազդում են մեր ազգ-պետության թե՛ միջազգային, թե՛ տարածաշրջանային անվտանգության միջավայրի ձևավորման վրա: Ուստի անվտանգության արտաքին համաչափ և անհամաչափ վտանգների չեզոքացումը հնարավոր է միայն միջազգային ինտեգրման միջոցով: Հայաստանն այդպիսի ռազմավարություն է իրականացնում տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:
Ինտեգրման միջոցով արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը նպատակաուղղված է բազմաբնույթ խնդիրների լուծմանը, տարածաշրջանային ու միջազգային համաչափ և անհամաչափ վտանգների կանխարգելմանն ու չեզոքացմանը: Նշեմ արտաքին անվտանգության ռազմավարության առաջնահերթությունները տարբեր բնագավառներում. ռազմական ոլորտ՝ Լեռնային

Ղարաբաղի հակամարտության խաղաղ և օրինապատշաճ լուծում, տնտեսական ոլորտ՝Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ և օրինապատշաճ լուծում, ՝ Հայաստանի տնտեսական մեկուսացման փորձերի չեզոքացում, քաղաքական ոլորտ՝ մեր երկրի և Հայոց Սփյուռքի դերի ու քաղաքական կշռի նվազեցման վտանգի կանխարգելում, Հայաստանի Հանրապետության միջազգային վարկի բարձրացում, տեղեկատվական ոլորտ՝ հակազդում Հայաստանի դեմ ուղղված ապատեղեկատվությանը և միջազգային հանրության պատշաճ իրազեկում:

Միջազգային ինտեգրումը էապես փոխկապված է ներքին անվտանգության խնդիրների հետ՝ Հայաստանում ծավալվող ժողովրդավարական բարեփոխումների թե՛ ներազգային, թե՛ միջազգային իրական գնահատումների ու վարկի հետ: Արդյունավետ ինտեգրման ռազմավարություն իրականացնելու համար Հայաստանը արտաքին քաղաքականության մեջ որդեգրել է փոխլրացման սկզբունքը, որի էությունն է հարևան պետությունների և միջազգային հանրության տարբեր ուժային կենտրոնների հետ հարաբերություններում հավասարակշռված ու բազմակողմ կողմնորոշման ապահովումը: Փոխլրացման սկզբունքը չի նշանակում հավասարակշռության պահպանում ամեն գնով: Այն միտված է միջազգային հարաբերություններով ընձեռվող ինտեգրացիոն հնարավորությունների, ընդհանրությունների արդյունավետ օգտագործմանը: Որպես միջազգային հանրության մի մասնիկ՝ Հայաստանը փոխլրացման իր քաղաքականությունը հիմնում է ոչ թե հակասությունների, այլ հենց այդ ընդհանրությունների գերակայության վրա՝ պրագմատիկորեն հաշվի առնելով միջազգային հանրության և Հայաստանի ընդհանուր ռազմավարական շահերը:

## 2.1. Տարածաշրջանային մակարդակ

Տարածաշրջանային մակարդակում ինտեգրման ռազմավարությունը, որը որդեգրել է Հայաստանը, նպատակաուղղված է այնպիսի մեխանիզմների ստեղծմանը, որոնց միջոցով հնարավոր լինի հակազդել մեր առջև ծառացած տարածաշրջանային վտանգներին: Հանուն դրա մենք հանդես ենք գալիս տարածաշրջանային համագործակցության միջավայրի ձևավորման, անվտանգության համակարգի ստեղծման, պետությունների հետ կառուցողական հարաբերությունների հաստատման դիրքերից: Այդ ճանապարհով է հնարավոր օրինապատշաճ ձևով լուծել տարածաշրջանային հակամարտությունները և առաջին հերթին ղարաբաղյան պրոբլեմը, կանխել ռազմական գործողությունների վերսկսումը, հաղթահարել մեր տարածաշրջանում առկա բաժանարար գծերը, ինչպես նաև հակազդել Հայաստանի ազգային շահերին հակասող ռազմաքաղաքական դաշինքներին, չեզոքացնել տարածաշրջանային ծրագրերից մեր երկրի դուրսմղման, տնտեսական ու քաղաքական մեկուսացման,

անվտանգության համակարգերի և առանձին պետությունների հակասական քաղաքականության հետևանքով Հայաստանի առջև ծառացող վտանգները: Միայն տարածաշրջանային համագործակցությամբ է հնարավոր դիմակայել միջազգային և տարածաշրջանային անվտանգությանն ուղղված սպառնալիքներին, հասնել տնտեսական, սոցիալական, մշակութային զգալի առաջընթացի, ապահովել կայուն զարգացում:
Հակասական և անկայուն տարածաշրջանային միջավայրում վտանգները բազմազան են և ունեն իրենց առանձնահատկությունները, լուծման յուրահատուկ միջոցները, ուստի դրանք հարկ է դիտարկել առանձին պետությունների հետ հարաբերությունների ձևաչափում:
ա) Հարաբերությունները Վրաստանի հետ
Վրաստանի հետ հարաբերությունները Հայաստանի համար ունեն ռազմավարական նշանակություն, քանի որ լուծում են անվտանգության մի շարք առաջնային խնդիրներ:
Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացված շրջափակման պայմաններում Վրաստանը այն հիմնական երկիրն է, որի միջոցով ապահովվում է տնտեսատրանսպորտային ելքը դեպի արտաքին աշխարհ՝ Ռուսաստան, Եվրոպա և ԱՄՆ: Բացի այդ, իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Վրաստանը հանդես է գալիս Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև տնտեսական և առևտրային միջնորդի դերում: Երկու երկրների հարաբերություններին ռազմավարական բնույթ է հաղորդում նաև վիրահայության գործոնը, հատկապես Վրաստանի հայաբնակ շրջանը՝ Ջավախքը:
Այս առումով Հայաստանի համար մտահոգության առիթ է Վրաստանում ներքաղաքական իրավիճակի պարբերական ապակայունացումը՝ կապված ազգամիջյան անհանդուրժողականության, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների, Ռուսաստանի և Վրաստանի միջև մշտապես լարված հարաբերությունների հետ: Իրական սպառնալիք է քաղաքաբնակ վիրահայության պրոֆեսիոնալ և տնտեսական-սոցիալական կարգավիճակի անկման պատճառով Վրաստանում նրա ունեցած հասարակական դերակատարության նվազման միտումը: Գնահատման կարիք ունի Վիրահայ սփյուռքի ուծացման և նրա՝ որպես քաղաքական գործոնի մարգինալացման (դերի անկման) վտանգը:
Վրաստանի ներքաղաքական իրավիճակի ապակայունացումը վտանգում է Հայաստանի տնտեսատրանսպորտային կապը արտաքին աշխարհի հետ, իսկ ազգամիջյան անհանդուրժողականությունը կարող է նաև ստեղծել հակահայկական տրամադրություններ՝ դառնալով Ջավախքի հայության արտագաղթի պատճառ: Ուստի Հայաստանը մեծապես շահագրգռված է Վրաստանի ներքաղաքական կայունության, հաստատուն և անվտանգ զարգացման մեջ և իր հարաբերություններում առաջնորդվում է հենց այդ

սկզբունքով: Մենք ամեն կերպ աջակցում ենք Վրաստանին Ջավախքում սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման գործում:
Վրաց-թուրքական, վրաց-ադրբեջանական համատեղ տնտեսական, տրանսպորտային, ռազմական ծրագրերը նույնպես նպատակաուղղված են մեր տարածաշրջանում հավասարակշռության խախտմանը և Հայաստանի մեկուսացմանը: Այս առումով առավել մեծ վտանգ է ներկայացնում Կարս–Ախալքալաք երկաթուղու շինարարության նախագիծը, որի նպատակն է Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի միջև երկաթուղային կապի ստեղծմամբ Ռուսաստանի և Եվրոպայի հետ այդ անդրկովկասյան հանրապետությունների հաղորդակցման ծավալումը: Տվյալ նախագծի իրագործումը ռազմավարական տեսանկյունից միտված է նաև այն բանին, որ իր նշանակությունը կորցնի Գյումրի–Կարս երկաթուղին:
Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հրահրվող այս ծրագրերը համապատասխանում են Վրաստանի ազգային անվտանգության շահերին, ուստի Հայաստանը փորձում է հավասարակշռել դրանք՝ առաջարկելով Վրաստանին վերագործարկել Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող Սուխում–Թբիլիսի երկաթուղին: Մյուս կողմից, տնտեսական մեկուսացման վտանգը չեզոքացնելու նպատակով Հայաստանը փորձում է բանակցությունների միջոցով բացել Կարս–Գյումրի–Թբիլիսի երկաթուղին: Այս ծրագիրը տարածաշրջանային ապաշրջափակման առավել իրատեսական միջոցն է, և մենք շարունակելու ենք ջանքեր գործադրել հանուն դրա իրականացման:
Հայաստանի ու Վրաստանի միջև հարաբերությունները կարևորվում են նաև փոխշահավետության տեսանկյունից, քանի որ երկու երկրների աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս տնտեսատրանսպորտային համագործակցությամբ ապահովելու Հայաստանի կապը Ռուսաստանի ու Եվրոպայի հետ և Վրաստանի կապը Իրանի ու Մերձավոր Արևելքի հետ: Բացի այդ, թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը հանուն ազգային և տարածաշրջանային անվտանգության շահերի հանդես են գալիս տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ կարգավորման դիրքերից: Չնայած իրականացման ուղիների տարբերությանը, երկու երկրներն էլ նախընտրել են եվրոինտեգրման միջոցով զարգացման ուղին:
Ռազմական բնագավառում երկու երկրների միջև գործնական համագործակցություն գրեթե չի իրականացվում: Սակայն կողմերը գիտակցում են, որ ռազմավարական տեսանկյունից հայ-վրացական ռազմական համագործակցությունը նույնպես փոխշահավետ է: Հայաստանը քայլեր է ձեռնարկում այս բնագավառում կապերն աշխուժացնելու ուղղությամբ:
Հայաստանի Հանրապետության նախագահի 2004 թ. կայացած վրաստանյան այցի ամփոփման ժամանակ պաշտոնապես հայտարարվել է, որ սկզբունքային

փոխհամաձայնություն է ձեռք բերվել ռազմական կցորդների մակարդակով երկկողմ ռազմադիվանագիտական կապերի հաստատման հարցում:
Հայ-վրացական հարաբերությունները կարևոր են ոչ միայն երկու երկրների համար, այլև հարավկովկասյան տարածաշրջանային անվտանգության արդյունավետ ճարտարապետության ձևավորման տեսանկյունից: Այս հարաբերությունները կարելի է գնահատել որպես Հարավային Կովկասում կայունության պահպանման կարևոր գործոն:
Այսպիսով՝ Վրաստանի հետ մեր հարաբերությունները բխում են երկու երկրների ռազմավարական շահերից և նպատակաուղղված են տարածաշրջանային ու եվրոպական ինտեգրմանը, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, ռազմական ոլորտներում կայուն և շարունակական համագործակցության զարգացմանը, այդ ոլորտները կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխմանը:
բ) Հարաբերությունները Իրանի հետ
Հայաստանի հարաբերություններն Իրանի հետ կարևորվում են տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության և կայունության պահպանման ընդհանուր ձգտմամբ:
Լինելով տնտեսական, ռազմական, մշակութային մեծ ներուժ ունեցող, անկախ արտաքին քաղաքականություն վարող երկիր՝ Իրանն առանցքային դերակատարություն ունի տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադրության ձևավորման գործում և տնտեսական ու քաղաքական ասպարեզում մրցակցում է Թուրքիայի հետ: Միաժամանակ, ՆԱՏՕ-ի անդամ, Իսրայելի և ԱՄՆ-ի դաշնակից Թուրքիան Իրանի արտաքին քաղաքականության հայեցակարգում գնահատվում է որպես սպառնալիք Իրանի ազգային անվտանգությանը: Թուրք-իրանական մրցակցությունը տարածաշրջանում ապահովում է որոշակի հավասարակշռություն, և այս առումով հայ-իրանական համագործակցությունը նպատակաուղղված է թուրք-ադրբեջանական դաշինքի հակահայկական քաղաքականության չեզոքացմանը:
Իրանի հետ Հայաստանի հարաբերությունները կրում են առավելապես տնտեսական և մշակութային բնույթ: Տնտեսական և, հատկապես, էներգետիկ բնագավառում այդ հարաբերություններում տեղի է ունեցել զգալի առաջընթաց, նախագծվել և իրականացվում են մի շարք տնտեսական-էներգետիկ ծրագրեր, որոնց նպատակն է Հայաստանի էներգետիկ անվտանգության այլընտրանքային ռեսուրսի ստեղծումը:
Տնտեսատրանսպորտային շրջափակման պայմաններում Հայաստանի մեկուսացումը չեզոքացնելու տեսակետից Հայաստանի համար է՛լ ավելի է շեշտվում Իրանի նշանակությունը՝ իբրև դեպի Ասիա և Մերձավոր Արևելք ռազմավարական կարևորագույն ճանապարհ ապահովող երկրի: Այն

այլընտրանքային կապ է ապահովում նաև Ռուսաստանի հետ: Բացի այդ, Իրանը ԼՂ հակամարտության օջախին ամենամոտ, փաստորեն սահմանակից պետություն է, որը ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում վարում է հավասարակշռված քաղաքականություն:
Անշուշտ, Հայաստանի համար վտանգավոր են Իրանի վրա Ադրբեջանի գործադրած ճնշումները: Մասնավորապես, լինելով իսլամական երկիր և հանդես գալով իսլամական ժողովուրդների պահապանի դերում, Իրանն զգալի ազդեցություն ունի իսլամական աշխարհում: Ադրբեջանն օգտագործում է այս փաստը և Ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնում կրոնական երանգավորմամբ՝ շահարկելով այսպես կոչված «մեկ միլիոն փախստական մահմեդականների» խաղաքարտը: Որպես ճնշման միջոց նա օգտագործում է ԱՄՆ–Իրան լարված հարաբերությունները և Իրանի հետ իր ռազմավարական առևտրի մեջ սպառնում է Իրանի դեմ հնարավոր պատերազմում օժանդակել ԱՄՆ-ին: Պատերազմի սպառնալիքը կարող է ստիպել Իրանին տեղի տալ Ադրբեջանի ճնշումներին և խախտել իր հավասարակշռված կեցվածքը: Հավասարակշռության խախտման նախադեպեր կան իսլամական կազմակերպություններում, մասնավորապես՝ Իսլամական կոնֆերանսում, որտեղ ընդունվում են ոչ հայանպաստ որոշումներ:
Հայաստանն այս վտանգը փորձում է չեզոքացնել՝ պահպանելով Իրանի հետ հավասարակշռված հարաբերություններ: Այդ նպատակով մեր համագործակցությունը ԱՄՆ-ի հետ մենք նույնպես չենք հակադրում Իրանի շահերին: Իրանի հետ ռազմաքաղաքական համագործակցությունը մեր քաղաքականության այն կարևորագույն մասն է, որը նպատակաուղղված է նաև իսլամական աշխարհում Հայաստանի նկատմամբ բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը:
Այսպիսով՝ վերոնշյալ վտանգները չեզոքացնելու համար Հայաստանը կարևորում է հայ-իրանական պարբերական խորհրդակցությունները անվտանգության բնագավառում:
Եվ վերջապես, Իրանի հետ մշտական հարաբերությունների շնորհիվ այդ երկիրը Հայաստանի համար դառնում է ավելի ընկալելի՝ միջազգային և տարածաշրջանային զարգացումներին առնչվող նրա դիրքորոշումների առավել ստույգ գնահատման տեսանկյունից:
գ) Հարաբերությունները Թուրքիայի հետ
Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրը մնում է մեր տարածաշրջանի ամենաարդիական հարցերից մեկը: Միաժամանակ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրն առնչվում է ոչ միայն երկու պետությունների փոխհարաբերություններին, այլև անմիջականորեն ազդում է տարածաշրջանում կայունության ամրապնդման, տարածաշրջանային

համագործակցության զարգացման վրա՝ դրանով իսկ կանխորոշելով կարևոր գործընթացներ: Հայ-թուրքական հարաբերությունների լարված բնույթը Հայաստանի ազգային անվտանգության ապահովման համար ստեղծում է մի շարք սպառնալիքներ՝ խոչընդոտելով Հայաստանի կայուն զարգացման գործընթացին: Այսպիսով՝ հայ-թուրքական հարաբերությունները բնորոշվում են Հայաստանի ազգային անվտանգության համար վտանգ ներկայացնող հետևյալ խնդիրներով: Առաջինը հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի շուրջ ստեղծված իրավիճակն է: Թուրքիան փորձում է ,Հայաստանի վրա ճնշում գործադրելով, աշխարհի հայությանն ստիպել հրաժարվելու այդ քաղաքականությունից, քանի որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, Թուրքիայի կարծիքով, իր տարածքային ամբողջականությանն ուղղված սպառնալիքներից մեկն է: Բացի այդ, հարցի առկայությունն իսկ Եվրամիությանը նրա ինտեգրվելու առաջնային խոչընդոտներից մեկն է: Այս պատճառով Թուրքիան, խեղաթյուրելով փաստերը, ծավալում է միջազգային ապատեղեկատվական և այլ բնույթի բուռն գործունեություն:
Չնայած դրան, վերջին շրջանում հայ ժողովուրդն ունեցել է բավական առաջընթաց՝ մի շարք երկրներ ճանաչել են Հայոց ցեղասպանության փաստը: Հայոց ցեղասպանության ճանաչումը մենք դիտարկում ենք պատմական արդարության վերականգնման, այդ երկրի կողմից իր անցյալի վերաարժեվորման, դրանով իսկ նոր ոտնձգությունների բացառման համատեքստում: Հայաստանը գիտակցում է, որ սա դժվար գործընթաց է և անմիջականորեն կապված է Թուրքիայում ժողովրդավարական արժեքների հաստատման հետ: Ուստի մեր երկիրը խնդրի լուծումը տեսնում է եվրոպական հարթությունում՝ որպես Թուրքիայի ժողովրդավարացման նախապայման և իր եվրոպական քաղաքականության մեջ առաջնորդվում է այդ նպատակով Թուրքիայի վրա ճնշում գործադրելու դիրքերից: Հաջորդը Թուրքիայի ձգտումն է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու հօգուտ Ադրբեջանի: Թուրքիան լավ է գիտակցում, որ Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծումը Հայաստանի ազգային անվտանգության ապահովման առաջնահերթություններից մեկն է, և հակամարտության լուծումը հօգուտ Ադրբեջանի կհանգեցնի Հայաստանի միջազգային ու տարածաշրջանային դերի նվազեցմանը, վտանգի տակ կդնի հայ ժողովրդի հետագա գոյությունը: Այդ նպատակին հասնելու համար Թուրքիան ծավալուն ռազմական օգնություն է ցուցաբերում Ադրբեջանին՝ փորձելով խախտել ռազմական հավասարակշռությունը և ստեղծել խնդրի ռազմական լուծման հեռանկարներ: Հայ-թուրքական հարաբերությունների լարվածությունը պայմանավորված է նաև նրանով, որ Թուրքիան տարածաշրջանային նշանակության տնտեսական, տրանսպորտային բազմաթիվ ծրագրեր իրականացնում է առանց Հայաստանի մասնակցության: Այդ նպատակին են ծառայում Բաքու–Ջեյհան նավթատարը,

Բաքու–Էրզրում գազատարը, Կարս–Ախալքալաք երկաթուղու շինարարության ծրագիրը և այլն: Թուրքիայի հովանավորությամբ իրականացվող այս բոլոր ծրագրերը նպատակաուղղված են Հայաստանի տնտեսական մեկուսացմանը, տարածաշրջանում նրա դերի նվազեցմանը: Տվյալ քաղաքականությունը նաև խրախուսում է Հայաստանի հանդեպ Ադրբեջանի մերժողական դիրքորոշումը և դառնում վերջինիս ռազմատենչ քաղաքականության պատճառներից մեկը: Տվյալ սպառնալիքների չեզոքացումը հնարավոր է Թուրքիայի կողմից Հայաստանի նկատմամբ ոչ թշնամական վերաբերմունքի ձևավորման դեպքում: Այս առումով մեծ դեր կարող է խաղալ միջազգային հանրության, հատկապես եվրոպական կառույցների՝ Եվրամիության, ՆԱՏՕ-ի, ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ինչպես նաև ԱՄՆ-ի միջնորդական դերը: Հայաստանի արտաքին անվտանգության ռազմավարությունը նպատակաուղղված է այդ ջանքերի և Թուրքիայի վրա գործադրվող ճնշումների ակտիվացմանը:

Պատահական չէ, որ Եվրամիությանն անդամակցելու համար Թուրքիայի առջև դրված է նաև հարևանների, մասնավորապես Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդիրը: Այդ պարտադիր, միաժամանակ բնական պահանջը շեշտվում է այն հանգամանքով, որ Հարավկովկասյան տարածաշրջանն ընդգրկվել է Եվրոպական հարևանության ծրագրում, ուստի Եվրամիության սահմանը, որը պետք է անցնի Թուրքիայով, չի կարող փակ լինել Հայաստանի համար:

Թուրքիայի անդամակցումը Եվրամիությանը չի հակասում Հայաստանի ազգային անվտանգության շահերին, քանի որ դա կստիպի առավել կանխատեսելի և վերահսկելի դարձնել այդ երկիրը, ժողովրդավարացնել այն, փոխել այդ երկրի արտաքին քաղաքականության, տնտեսական զարգացման, մարդու անհատական և կոլեկտիվ իրավունքների պաշտպանության առաջնահերթությունները: Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների նկատառումով Հայաստանը պետք է որակապես բարեփոխի իր տեղեկատվական, իրազեկման համակարգի գործունեությունը միջազգային դաշտում՝ հատկապես Հայոց ցեղասպանության ու Ղարաբաղյան պրոբլեմի կարգավորման հարցերում քարոզչական ապատեղեկատվությունը կանխելու և դրան հակազդելու նպատակով:

դ) Հարաբերությունները Ադրբեջանի հետ. Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը

Հայ-ադրբեջանական հարաբերությունների բացակայության հիմքում Լեռնային Ղարաբաղի չկարգավորված զինված հակամարտությունն է: Լեռնային Ղարաբաղի խնդրի սառեցված բնույթը և դրա առնչությամբ Ադրբեջանի իրականացրած քաղաքականությունը համաչափ և անհամաչափ սպառնալիքներ են ստեղծում Հայաստանի ազգային անվտանգության ապահովման համար:

Անմիջական ռազմական սպառնալիք է Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունը՝ Հայաստանի նկատմամբ ռազմական գերազանցության

հասնելու միջոցով Ղարաբաղյան պրոբլեմն այդ եղանակով լուծելու ձգտումը: Այդպիսի քաղաքականությունն սպառնում է ամբողջ տարածաշրջանի անվտանգության միջավայրի ապակայունացմամբ: Բացի այդ, մշտական ռազմական սպառնալիքի առկայությունը խոչընդոտում է մեր պաշտպանական բնագավառում արմատական բարեփոխումների իրականացման գործընթացին և հանգեցնում սպառազինությունների մրցավազքի: Դեռ ավելին. այդ նպատակով Բաքուն ադրբեջանական ժողովրդի մեջ մշտապես սերմանում է ատելություն հայերի հանդեպ: Այդպիսի դիրքորոշումն անհարիր է եվրոպական արժեքային համակարգ կառուցող երկրին և ապացուցում է, որ քաղաքական շահերի հետամուտ ադրբեջանական իշխանությունների կողմից այդ սկզբունքների հռչակումը կրում է զուտ դեկլարատիվ բնույթ:
Ուստի Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը ՀՀ Զինված ուժերից պահանջում է մշտապես լինել բարձր մարտական պատրաստականության վիճակում: ՀՀ Զինված ուժերի գլխավոր խնդիրներն են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ռազմական անվտանգության, սահմանների անձեռնմխելիության պահպանումը, ցանկացած ագրեսիայի հետմղումը:
Հնարավոր վտանգ են ներկայացնում նաև Ադրբեջանի փորձերը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներից տեղափոխելու այլ հարթություն, մասնավորապես՝ ՄԱԿ, Եվրոպայի Խորհուրդ կամ ՆԱՏՕ: Դրանք ուղեկցվում են Ադրբեջանի քարոզչական մեքենայի ապատեղեկատվական գործունեությամբ, ինչը խնդրի էությանն անծանոթ միջազգային կազմակերպությունների շրջանակներում Բաքվին բերում է դրական միավորներ: Այս առումով զգալի աշխատանք ունեն ՀՀ տեղեկատվական անվտանգության համակարգը, արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունը, որոնք պետք է արդյունավետ կերպով օգտագործեն թե՛ Հայաստանի, թե՛ Սփյուռքի ամբողջ ներուժը:
Մինսկի խումբը՝ ի դեմս Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի, որը ներկայացնում է նաև Եվրոպական համայնքը, առավելագույն արդյունավետությամբ արտացոլում է տարածաշրջանային զարգացումներում որոշակի շահագրգռություն ունեցող ուժերի հարաբերակցությունը: Բացի այդ, երեք համանախագահ երկրներն էլ ծանրակշիռ դերակատարություն ունեն միջազգային հարաբերություններում, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ են, և դժվար է պատկերացնել միջնորդական առավել պատշաճ ձևաչափ: Հայաստանը խնդրի լուծումը տեսնում է Մինսկի խմբի շրջանակներում, փոխզիջումային և խաղաղ կարգավորման միջոցով՝ ելնելով Ղարաբաղի հայության ֆիզիկական անվտանգության երաշխավորման պահանջներից, ինչպես նաև նրա կայուն ժողովրդավարական զարգացման համար անհրաժեշտ պայմաններից, ընդունելի համարելով

կարգավորման միայն այն տարբերակները, որոնք կբխեն հետևյալ երեք սկզբունքներից.
Ադրբեջանին Ղարաբաղի ենթակայության անհնարինություն:
Լեռնային Ղարաբաղի անկլավային գոյության անհնարինություն, ցամաքային սահմանի առկայություն Հայաստանի հետ և համաշխարհային առաջադեմ գործընթացներին Լեռնային Ղարաբաղի մասնակցության համար պայմանների ստեղծման միջազգային երաշխիքներ:
Պատերազմի չվերսկսման և Ղարաբաղի բնակչության անվտանգության միջազգային հստակ երաշխիքների անհրաժեշտություն:
Բոլոր հնարավոր փոխզիջումները պետք է կատարվեն այս սկզբունքների պահպանման շրջանակներում:
Անվտանգությանը լուրջ սպառնալիք է Ադրբեջանի կողմից իրականացվող Հայաստանի տնտեսատրանսպորտային շրջափակումը, տարածաշրջանային էներգետիկ-տնտեսական ծրագրերից Հայաստանին դուրս թողնելու քաղաքականությունը: Այն նպատակաուղղված է Հայաստանի տնտեսական մեկուսացմանը և կասեցնում է հանուն տարածաշրջանային զարգացման ձեռնարկվող ինտեգրման գործընթացների թափը:
Հայաստանը բազմիցս հայտարարել է, որ տարածաշրջանի զարգացման, այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման, միակ իրատեսական ուղին համարում է համագործակցության սկզբնավորումը՝ ընդհանուր տնտեսական ծրագրերի իրականացումը, ճանապարհատրանսպորտային համագործակցությունը և այլն: Որոշակի կապերի հաստատումը կարող է ապահովել այն շփման դաշտը, որը կհանգեցնի երկու ժողովուրդների միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը, ինչն էլ հակամարտության կարգավորման ամենաառաջնային նախադրյալն է:
Ադրբեջանի իշխանությունները Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը պայմանավորում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ բացառապես իրենց շահերից բխող լուծմամբ: Այդ կոշտ դիրքորոշումը անհեռանկարային է և բացառում է տվյալ բարդ հիմնախնդրի լուծումը: Մենք համոզված ենք, որ ամբողջ տարածաշրջանի զարգացման ու ինտեգրման գործընթացն արգելակող միջպետական հարաբերությունների կանոնավորումը միաժամանակ կարող է նախադուռ լինել նաև Ղարաբաղյան հակամարտության հարցի հանգուցալուծման իրատեսական հեռանկարի համար:
Ի վերջո, Հայաստանն ու Ադրբեջանը հարևաններ են, նրանք ներգրավված են բազում միջազգային կազմակերպություններում՝ ԱՊՀ կառույցում, ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրում, Եվրոպական հարևանության ծրագրում, վերջապես՝ ՄԱԿ-ում, և ունեն միմյանց հետ բարիդրացիական հարաբերություններ կառուցելու բազում միջազգային պարտավորություններ:

Ինտեգրման տարածաշրջանային գործընթացների ակտիվացմանը զուգընթաց՝ միջազգային հանրության մտապատկերում սկսում է ձևավորվել Հայաստանի և Ադրբեջանի միջև համագործակցության եզրեր գտնելու անհրաժեշտության գաղափարը: Սակայն Հայաստանի տարածաշրջանային տնտեսական մեկուսացումը կանխելու համար անհրաժեշտ է ակտիվացնել դրան նպատակաուղղված ջանքերը, մեծացնել միջազգային հանրության միջոցով Ադրբեջանի վրա գործադրվող ճնշումը:
Ինչ վերաբերում է Ադրբեջանի կողմից շահարկվող տարածքային ամբողջականության հարցին, ապա այն, եթե դիտարկենք միջազգային իրավունքի տեսակետից, ունի հակամարտության կարգավորմամբ հետաքրքրված բոլոր պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից լուրջ ուսումնասիրության կարիք: Քիչ հետ գնալով դեպի հակամարտության ակունքները, ինչպես նաև վերլուծելով դրան հաջորդած սահմանադրական-իրավական զարգացումները՝ կտեսնենք, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարց որպես այդպիսին գոյություն չունի, քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ձեռքբերումը կատարվել է ԽՍՀՄ այդ ժամանակ գործող բոլոր օրենսդրական պահանջներին համապատասխան:

## 2.2. Միջազգային մակարդակ

Միջազգային ինտեգրման ռազմավարությունը արտաքին հարաբերությունների ոլորտում Հայաստանի անվտանգության ապահովման քաղաքականության հիմնական ուղենիշն է: Դա է ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակարգի կառուցման լավագույն միջոցը, քանի որ ընձեռում է բարեփոխումներ իրականացնելու, դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, միջազգային հանրության աջակցությունն ստանալու հնարավորություններ: Հայաստանի անվտանգության ապահովման մի շարք խնդիրներ գտնվում են միջազգային հարաբերությունների դաշտում. մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ ԵԱՀԿ շրջանակներում, բարեփոխումների, ժողովրդավարացման գործընթացը՝ Եվրոպայի խորհրդի և Եվրոպական Միության շրջանակներում, ռազմական անվտանգության ապահովման խնդիրները՝ ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի տիրույթում: Ուստի Հայաստանը միջազգային ինտեգրման ռազմավարությունն իրականացնում է տարածաշրջանում իր շահերը ներառող համակարգերի հետ սերտ համագործակցությամբ, ներգրավվում է բազմաթիվ նախագծերում, ինչպիսիք են «Եվրոպական հարևանությունը»՝ Եվրամիության հետ, «Հազարամյակի մարտահրավերները»՝ ԱՄՆ-ի հետ և այլն:
Հայաստանն անդամակցում է համընդհանուր սկզբունքներ, տեսակետներ ու արժեքներ դավանող, համապատասխան իրավապայմանագրային դաշտում

գտնվող մի շարք միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների և օգտվում է դրանից բխող իրավունքներից ու պարտականություններից:
Հայաստանի Հանրապետությունն իրեն դիտում է ոչ թե միջազգային անվտանգության միայն սպառողի, այլև դրա ապահովման ակտիվ մասնակցի դերում: Մեր երկիրը մասնակցում է ահաբեկչության դեմ միջազգային պայքարին, զանգվածային ոչնչացման զենքի չտարածմանն ուղղված նախաձեռնություններին, խաղաղարար միջազգային առաքելություններին և նմանօրինակ այլ ձեռնարկումների, վարում է հետխորհրդային տարածքում և Եվրոպական համայնքում, միջազգային հարաբերություններում առաջատար դեր խաղացող առանձին պետությունների հետ ինտեգրման քաղաքականություն:
ա) Ռազմավարությունը հետխորհրդային տարածքում. ԱՊՀ / ՀԱՊԿ
Ստեղծվելով հետխորհրդային տարածքում՝ ԱՊՀ-ն նպատակ ուներ լրացնելու այն ռազմաքաղաքական և տնտեսական վակուումը, որն առաջացավ ԽՍՀՄ փլուզումից հետո: Այս առումով ԱՊՀ-ն զգալի դեր կատարեց նախկին խորհրդային հանրապետությունների միջև ձևավորված տնտեսական, ռազմաքաղաքական կապերի լիակատար փլուզումը կանխելու գործում:
Այսօր ԱՊՀ երկրների միջև մի շարք բնագավառներում կան լուրջ տարաձայնություններ, միևնույն ժամանակ ԱՊՀ երկրների գերակշիռ մասն ընտրել է եվրոպական զարգացման, ժողովրդավարացման և բարեփոխումների ուղին: Այսօր այդ բոլոր պետություններն էլ քաղաքական զարգացման համեմատաբար նույն մակարդակի վրա են, ունեն տնտեսական, ռազմական, սոցիալական զարգացման միանման պրոբլեմներ, դեռևս բավական ամուր են նրանց տնտեսական, մշակութային կապերը: Ինտեգրման գործընթացում միջազգային հանրությունը ևս նույնանման խնդիրներ է առաջադրում ԱՊՀ երկրներին: Այս առումով Հայաստանի համագործակցությունը ԱՊՀ շրջանակներում բխում է անվտանգության ընդհանուր բնույթ ունեցող խնդիրների լուծման անհրաժեշտությունից և ԱՊՀ երկրների համար այդ խնդիրների փոխպայմանավորվածությունից:
Ռազմական-ռազմաքաղաքական համագործակցության զարգացման, ԱՊՀ բոլոր երկրների համար ընդհանուր պաշտպանական համակարգի ստեղծման փորձերը մինչ օրս ձախողվել են: Նույնիսկ ՀՕՊ-ի միացյալ համակարգը, որն զգալի նշանակություն ունի Հայաստանի պաշտպանունակության ամրապնդման համար, ըստ էության, իրականացվում է հայ-ռուսական ռազմավարական համագործակցության վրա հիմնվող երկկողմ սկզբունքով:
Այդ իսկ պատճառով, կարևորելով և ակտիվորեն մասնակցելով ԱՊՀ շրջանակներում ընթացող, այդ թվում՝ ռազմական բնագավառում առկա, գործընթացներին, Հայաստանի Հանրապետությունը, այնուամենայնիվ, առաջնությունը տալիս է Հավաքական անվտանգության պայմանագրի

կազմակերպությանը՝ որպես Հայաստանի անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրատարրերից մեկի:
ՀԱՊԿ գործունեության արդյունավետությունը բխում է այն հանգամանքից, որ այդ կառույցը զարգանում է ռազմավարական երեք առանձին ուղղություններով: Ինտեգրման ընդհանուր գործընթացներից զատ, յուրաքանչյուր ուղղություն զարգանում է ըստ որոշակի խնդիրների լուծման անհրաժեշտության: Կովկասյան ուղղությունն այսօր հայ-ռուսական ռազմական համագործակցությունն է, ուստի նրա նշանակությունը Հայաստանի համար հետզհետե ավելի է աճում: Մասնավորապես, ՀԱՊԿ ռազմական բաղադրյալի զարգացումը նպատակաուղղված է ՀԱՊԿ պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության գործուն մեխանիզմների ստեղծմանն ու կայացմանը, միջազգային սպառնալիքների՝ ահաբեկչության, թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառության դեմ պայքարի արդյունավետ միջոցների ստեղծմանը, այս ասպարեզում տեղեկատվության փոխանակմանը, ինչը լուծում է ՀՀ ռազմական անվտանգության համար կենսական նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ:
Զուտ ռազմական և ռազմաքաղաքական նշանակությունից բացի, ՀԱՊԿ-ն տնտեսա-տրանսպորտային, էներգետիկ և այլ բնագավառներում նույնպես ընձեռում է լայն համագործակցություն իրականացնելու հնարավորություններ: Հատկապես վերջին շրջանում այս բնագավառում ևս տեղի են ունենում ինտեգրման ակտիվ գործընթացներ, ինչն է՛լ ավելի է կարևորում ռազմական համագործակցության նշանակությունը, քանզի տնտեսական շահերի առկայությունը ռազմական հարաբերությունների ամրապնդման ցանկալի, երբեմն նույնիսկ պարտադիր նախապայմանն է:
բ) Եվրոպական ինտեգրում
Հայաստանն իր կայուն և անվտանգ զարգացումը տեսնում է եվրոպական շրջանակներում: Եվրոպական կառույցների հետ հարաբերությունները Հայաստանի համար ունեն առանցքային նշանակություն: Զարգացման եվրոպական ուղին պատահաբար չի ընտրված, այլ պայմանավորված է եվրոպական խոր արմատներ և աշխարհայացք ունեցող հայ ժողովրդի հասարակական գիտակցությամբ: Միաժամանակ, եվրոպական հանրության լիարժեք անդամը լինելու ձգտումը՝ որպես պետականորեն ամրագրված նպատակ, նշանակում է համաեվրոպական արժեքների ներթափանցում պետական և հասարակական բոլոր ոլորտներ, այդ թվում՝ անվտանգության ապահովման բնագավառ:
Հայաստանն այսօր հավատարմորեն շարունակում է իր արդյունավետ ու հեռահար համագործակցությունը Եվրոպայի խորհրդի և Եվրամիության շրջանակներում,

ինչպես նաև համաեվրոպական անվտանգությունն ապահովող համակարգերի՝ ՆԱՏՕ-ի ու ԵԱՀԿ-ի հետ:

- Եվրոպայի խորհուրդ

Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ է և ներգրավված է նրա մարմիններում՝ Խորհրդարանական վեհաժողովում, նախարարների կոմիտեում և մի շարք այլ կառույցներում: Բարեփոխումների իրականացման և Ժողովրդավարական արժեքների ամրագրման գործում մենք առաջնային ենք համարում Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունների կատարումը: Հայաստանի անվտանգության ապահովման վրա դրանց դրական ազդեցությունը շոշափելի է: Սակայն տվյալ կառույցում Ղարաբաղյան կարգավորմանը նվիրված վերջին լսումներն ի հայտ բերեցին Եվրախորհրդի և վերջինիս Խորհրդարանական վեհաժողովի հետ մեր աշխատանքի ոչ բավարար լինելը: Հայաստանը պետք է իր ազգային անվտանգության ռազմավարության մեջ ավելի նպատակային ձևով արտացոլի Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ապահովման բնագավառում Եվրախորհրդի դերի մեծացման իրողությունը:

- ԵԱՀԿ

ԵԱՀԿ-ն Հայաստանի համար ունի մի առանձնահատուկ նշանակություն. Հայաստանի անվտանգության առաջնային խնդիրներից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը, գտնվում է ԵԱՀԿ շրջանակներում: Վերջին ժամանակներս նկատվում է ԵԱՀԿ հեղինակության նվազման միտում, ինչը կարող է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը տեղափոխել այլ կազմակերպության, օրինակ, Եվրոպայի խորհրդի շրջանակներ: Այս նպատակով զգալի աշխատանք է կատարում Ադրբեջանը:

Հայաստանի շահերից է բխում ԵԱՀԿ դերի ամրապնդումը: Ուստի մենք շարունակելու ենք ակտիվ գործունեությունը ԵԱՀԿ կառույցներում՝ մասնավորապես ԵՍԶՈՒ-ի և Վիեննայի փաստաթղթի պահանջների իրականացման ասպարեզում, և Մինսկի խմբի շրջանակներում՝ նպաստելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

Մենք կարևորում ենք տարածաշրջանային անվտանգության միջավայրն ամրապնդելու գործում ԵԱՀԿ տարածաշրջանային և մասնավորապես երևանյան գրասենյակի գործունեությունը:

- Եվրոպական Միություն

Եվրոպական Միության հետ Հայաստանի հարաբերությունները պայմանավորված են աշխարհառազմավարական զարգացումներով: Դրանցից առավել նշանակալից են համաշխարհային քաղաքականության ու տնտեսության մեջ Եվրամիության ազդեցության մեծացումը նրա ընդլայնման հետևանքով, ինչպես նաև Հարավային Կովկասի ներառումը

Եվրոինտեգրման ծրագրերում: Եթե համաեվրոպական կառույցների զարգացումն ու ամրապնդումը կարելի է համարել Եվրոպայի ինտեգրման ներքին քաղաքականություն, ապա այդ առումով արտաքին քաղաքականությունը բնորոշվում է «Եվրոպական հարևանության» սկզբունքով, որում ընդգրկվել է նաև Հարավային Կովկասը:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը Հայաստանի համար կարևորվում է ոչ միայն տնտեսական և ռազմական անվտանգության տեսանկյունից, այլև առավել գլոբալ՝ հայեցակարգային, առումով: Այն նախատեսում է ինտեգրման գործընթացների նպատակաուղղում դեպի կայունության և փոխվստահության մթնոլորտի հաստատում առանձին և տարածաշրջանային ձևաչափով, ինչը նախանշում է Հարավային Կովկասի և հատկապես երկկողմ շրջափակված Հայաստանի համար առկա խնդիրների լուծումը:

Չպետք է մոռանալ, որ այսօր Հայաստանի անվտանգության ապահովման հիմնական գործոնները գտնվում են Եվրամիության տիրույթում. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը՝ ԵԱՀԿ շրջանակներում, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, սահմանների բացման, Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջները՝ որպես Եվրամիությանն անդամակցելու ձգտող Թուրքիային առաջադրված նախապայմաններ, և այլն:

Եվրոպական հարևանությունը Հայաստանի համար ունի նաև մեծ տնտեսական նշանակություն: Եվրամիությունը Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերներից է, նրա ձեռնարկած լուրջ քայլերը միտված են եվրոպական մոդելով տարածաշրջանային համագործակցության զարգացմանն ու բարեփոխումների ծրագրերի իրագործմանը:

Այսպիսով՝ Հայաստան–Եվրամիություն հարաբերությունների ռազմավարական բնույթն ապահովում է դրանց հեռահարությունը, ընդլայնման և զարգացման շարունակականությունը: Այն, որ Հայաստանի կողմից որդեգրված եվրոպական ինտեգրման ուղին սոսկ դեկլարատիվ չէ, վկայում են տնտեսական, սոցիալական, օրենսդրական ոլորտներում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումները, տնտեսության ազատականացման գործընթացը, տնտեսական աճի կայուն ցուցանիշները և բազում այլ գործոններ:

- ՆԱՏՕ

Հայաստան–ՆԱՏՕ հարաբերություններն իրենց կարևոր դերակատարությունն ունեն Հայաստանի անվտանգության ապահովման համակարգում: Հայաստանն ընտրել է Եվրոպական զարգացման ուղին, ուստի նրա անվտանգությունն ապահովող առանցքային կառույցի՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները ձևավորվում են բնականորեն՝ զարգանալով եվրոպական ինտեգրման գործընթացներին զուգընթաց:

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության որակական զարգացումն անմիջականորեն բխում է մեր ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, և Հայաստանը շարունակելու է այդ կազմակերպության հետ համատեղ ծրագրերի իրականացումը:

Հատկապես վերջին տարիներին Հայաստան–ՆԱՏՕ համագործակցությունն առարկայական պատկեր է ստանում՝ բարձրանալով լիովին նոր մակարդակի: Դա պայմանավորված է ոչ միայն Հայաստանի ցանկությամբ, այլև ՆԱՏՕ-ի կողմից նոր քաղաքականության որդեգրմամբ, Հարավային Կովկասն իր ռազմավարական շահերի շրջանակում ներառելու և գործընկերների հետ անհատական հարաբերություններ զարգացնելու որոշումներով: Հարաբերությունների որակական զարգացումը դրսևորվում է այդ համագործակցության հայեցակարգային և գործնական չափումներում: Մասնավորապես, Պլանավորման և վերանայման գործընթացի (ՊՎԳ–PARP) շրջանակներում մշակվել ու հաստատվել են ՀՀ Գնահատման փաստաթուղթը և Գործընկերության նպատակների փաթեթը, համաձայնեցվել են գործընկերության 33 նպատակներ, որոնք միտված են ՆԱՏՕ-ի հետ ՀՀ ԶՈՒ-ի ստորաբաժանումների ներդաշնակ փոխգործակցության զարգացմանը:

2004 թ. Հայաստանը միացել է նաև Անհատական գործընկերության գործողությունների պլանին (ԱԳԳՊ–IPAP): Ներկայումս ընթանում է ԱԳԳՊ «Ներկայացման փաստաթղթի» ձևավորումը, որով նախատեսվում է համագործակցություն՝ պլանավորման և հայեցակարգների մշակման ու ներդաշնակեցման գործընթացներում:

Ինչ վերաբերում է ԳԻԽ Անհատական գործընկերության ծրագրի իրագործմանը, ապա այստեղ ևս առաջնայնությունը տրվում է բուն ռազմական բնույթի համագործակցությանը, մասնավորապես՝ մասնակցությանը ՆԱՏՕ/ԳԻԽ զորավարժություններին:

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության զարգացումը նպաստում է նաև եվրոպական երկրների հետ (Հունաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և ուրիշներ) երկկողմ կապերի ամրապնդմանը, քանի որ այդ երկրների գերակշիռ մասը ՆԱՏՕ-ի անդամ է, և հենց Հյուսիսատլանտյան դաշինքն է նրանց մղում Հայաստանի հետ համագործակցության զարգացմանը:

գ) Հարաբերությունները առաջատար երկրների հետ

- Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի Դաշնության հետ ՀՀ հարաբերությունները կրում են ռազմավարական բնույթ և կարևորվում են Հայաստանի անվտանգության առավելագույն երաշխիքների համար իրենց ունեցած անկյունաքարային դերով ու նշանակությամբ:

Այդ բազմատարր հարաբերությունները բխում են Հայաստանի և Ռուսաստանի հեռահար ռազմավարական շահերից: Դրանք ընդգրկում են երկու պետությունների և նրանց ժողովուրդների միջև համագործակցության բոլոր հնարավոր ոլորտները և համակարգվում են շուրջ 160 երկկողմ միջազգային պայմանագրերով: Նշանակալից է, որ

համագործակցության այդ լայն շրջանակում բոլոր բաղկացուցիչները գտնվում են բարձր մակարդակի վրա և առանցքային դեր են կատարում մեր պետության անվտանգության ապահովման գործում: Բավական է նշել ռազմական, առևտրա-տնտեսական, էներգետիկ, գիտական և այլ ոլորտները, հատկապես վերջին շրջանում ռուսական կապիտալի ներհոսքը Հայաստան:

Իհարկե, հայ-ռուսական ռազմավարական համագործակցության առաջնային ոլորտն է համարվում ռազմական և ռազմատեխնիկական բնագավառը, որտեղ հարաբերությունների ռազմավարական բնույթն է՛լ ավելի է շեշտված:

Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի շահերի տեսանկյունից հայ-ռուսական ռազմական համագործակցությունը լուծում է հետևյալ հիմնարար խնդիրները.

- ՀՀ Զինված ուժերի ռազմական և ռազմատեխնիկական կարիքների ապահովում,
- տարածաշրջանում ուժերի հաշվեկշռի պահպանում:

Հայ-ռուսական ռազմական համագործակցության զարգացումն իրականացվում է երեք կարևոր նպատակային ուղղություններով.

–կոալիցիոն խմբավորումներ,

–ՀՕՊ-ի միացյալ համակարգ,

- համագործակցություն ՀԱՊԿ շրջանակներում:

Հայ-ռուսական ռազմական համագործակցությունը և հատկապես ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի ներկայությունը մեծապես չեզոքացնում են Թուրքիայից բխող ռազմական վտանգը:

Բացի երկկողմ ձևաչափից, հայ-ռուսական հարաբերությունները ոչ պակաս կարևոր են նաև բազմակողմ շրջանակներում: Օրինակ՝ ԱՊՀ ՀՕՊ-ի միացյալ համակարգը՝ Հայաստանում հայ-ռուսական համատեղ հերթապահությամբ հանդերձ, լուծում է ՀՀ անվտանգության կարևորագույն խնդիրներից մեկը, իսկ հայ-ռուսական ռազմական դաշինքը տարածաշրջանային անվտանգության այնպիսի համակարգերում, ինչպիսին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունն է, այսօր կարևոր դեր է կատարում Հարավկովկասյան տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանման գործում և առհասարակ՝ միջազգային հարաբերություններում:

Այս ամենով հանդերձ, հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունները երբեք խոչընդոտ չեն դարձել ՀՀ արտաքին հարաբերությունների մյուս ուղղությունների, մասնավորապես Եվրոպական ինտեգրման զարգացման համար: Ընդհակառակը, Ռուսաստանը նույնպես որդեգրել է զարգացման եվրոպական ուղին, իսկ Ռուսաստան–Եվրամիություն նկատելի մերձեցման պայմաններում Հայաստանի համար նպաստավոր

դաշտ է ստեղծվում պետության, ազգային անվտանգության զարգացման այս երկու գերակա ճյուղերի ներդաշնակեցման և հնարավորինս ցանկալի արդյունքների հասնելու համար:

- ԱՄՆ

ԱՄՆ-ի հետ բազմատարր համագործակցության զարգացումը Հայաստանի համար առաջնային նշանակություն ունի ժողովրդավար պետականության, ազգային անվտանգության կայացման գործում:

ԱՄՆ-ը առաջնային դերակատարություն ունի թե՛ միջազգային և թե՛ տարածաշրջանային գործընթացներում: Հայաստանի անկախացումից ի վեր այդ երկիրն առաջնորդվել է Հայաստանին պետական օժանդակություն ցուցաբերելու քաղաքականությամբ: Տնտեսական ու ժողովրդավարական բարեփոխումների ասպարեզում տարածաշրջանային պետություններին և Հայաստանին ԱՄՆ-ի ցուցաբերած օժանդակությունը հիմնարար նշանակություն ունի քաղաքացիական հասարակարգի կառուցման գործում:

Այդ նպատակին ծառայեցվող հայ-ամերիկյան հարաբերությունները վերջին տարիներին ունեցել են էական առաջընթաց: Հայաստանն ընդգրկվել է «Հազարամյակի մարտահրավերներ» նախաձեռնությունում, որը նախատեսում է ծավալուն ֆինանսական և գործնական օժանդակություն պետական կայուն զարգացման գործում:

Քաղաքական, տնտեսական, մշակութային և մյուս ոլորտներում իրականացվող համագործակցությանը զուգընթաց լուրջ կերպով զարգացել են հայ-ամերիկյան ռազմական հարաբերությունները: Այսօր դրանք ընթանում են մի շարք ուղղություններով, իրականացվում են տարբեր ծրագրեր, մասնավորապես՝ Արտաքին ռազմական ֆինանսավորում, Միջազգային ռազմական ուսուցում և վարժանք ծրագրերը, «Համատեղ կոնտակտային խումբ» ծրագիրը ԱՄՆ եվրոպական հրամանատարության հետ, Նահանգային գործընկերության ծրագիրը Կանզաս նահանգի հետ և այլն:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի հետ ռազմական համագործակցությունը Հայաստանի ԶՈՒ-ի համար ունի ոչ միայն մեծ ռազմական նշանակություն, այլև կարևորվում է ռազմաքաղաքական տեսանկյունից, քանի որ այն, նպաստելով ՀՀ ԶՈՒ-ի մարտական կարողությունների մեծացմանը, անկյունաքարային դեր է կատարում Հայաստանի ռազմական քաղաքականության հավասարակշռվածությունը պահպանելու համար՝ այլընտրանքային ռազմական համագործակցություն իրականացնելու առումով. մեծամասամբ ԱՄՆ-ի հետ հարաբերություններով է պայմանավորված ՀՀ համագործակցության զարգացումը թե՛ ՆԱՏՕ-ի շրջանակներում, թե՛ եվրոպական երկրների հետ՝ երկկողմ ձևաչափով:

Հայ-ամերիկյան հարաբերություններում զգալի դերակատարություն ունի ամերիկահայ համայնքը, որն այդ հարաբերություններին հաղորդում է մի յուրահատուկ բնույթ: Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակումից հետո ամերիկահայ համայնքը մեծ ջանքեր է գործադրել ԱՄՆ-ի կառավարական օղակներում, ԱՄՆ-ի Կոնգրեսում

հայանպաստ բանաձևեր անցկացնելու, Հարավկովկասյան տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքականության հավասարակշռությունը հօգուտ Ադրբեջանի խախտելու փորձերը չեզոքացնելու գործում: Այդ դերակատարությունն զգալի է նաև այսօր:

Ըստ այդմ Հայաստանը շարունակելու է ԱՄՆ-ի հետ համագործակցության կայուն զարգացումը, ինչը բխում է մեր ազգային անվտանգության ապահովման առաջնահերթություններից:

3. Համահայկական ինտեգրման ռազմավարությունը

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովումն ունի մեկ յուրահատկություն, որը բնորոշ է եզակի պետությունների: Դա Հայոց սփյուռքի առկայությունն է:
Հայկական սփյուռքն իր թվաքանակով կրկնակի գերազանցում է Հայաստանի բնակչությանը և ցրված է աշխարհով մեկ: Ընդհանուր առմամբ նա բնորոշվում է տարբեր պետություններում իր ինտեգրվածությամբ, պետական, հասարակական կյանքում զգալի դերակատարությամբ, ինչը չափազանց կարևոր է Հայաստան–Սփյուռք կապերի ամրապնդման համար:
Այդ կապերը տարեցտարի ընդլայնվում են և առնչվում հայության կենսագործունեության տարբեր ոլորտներին: Դրանք առանձնահատուկ դեր ունեն Հայաստանի անվտանգության ապահովման գործում, քանի որ Սփյուռքը յուրօրինակ կամուրջ է Հայաստանի և միջազգային հանրության միջև: Համահայկական կազմակերպությունները, որոնք գործում են տարբեր հասարակական-քաղաքական բնագավառներում, մեծապես նպաստում են Հայաստանի միջազգային ինտեգրմանը, երկրում ժողովրդավարության ամրապնդմանը, և այդ արժեքները Հայաստանի Հանրապետություն են ներկրվում նաև Սփյուռքի միջոցով:
Համահայկական ինտեգրման ռազմավարությունը հայ ժողովրդի անվտանգության խնդիր է: Այն ուղղված է Սփյուռքի ազգամշակութային ինքնության կորստյան և ուծացման կանխմանը՝ մի կողմից, և Հայաստանից արտագաղթի չեզոքացմանը՝ մյուս կողմից: Կան այս երկու վտանգներին հակազդեցության տարբեր միջոցներ, ինչպիսին, ասենք, երկքաղաքացիությունն է:
Համահայկական ինտեգրումն ունի նաև մեծ տնտեսական ու մշակութային նշանակություն, քանի որ խթանում է տուրիզմը, մշակութային արժեքների պահպանությունը, տարածումը և այլն:
Սակայն, սերտորեն համագործակցելով Սփյուռքի բազմաթիվ համահայկական կազմակերպությունների հետ, մենք լավ ենք գիտակցում, որ Սփյուռքի ներկայացուցիչներն այլ երկրների քաղաքացիներ են, ուստի այդ համագործակցությունը որոշակիորեն սահմանափակված է: Այս առումով համահայկական ինտեգրումը՝ Հայաստան–Սփյուռք փոխհարաբերությունների

ամրապնդումը, անմիջականորեն կապված է Հայաստանի միջազգային ինտեգրման հետ. որքան արդյունավետ է այդ ինտեգրումը, այնքան ամուր են հարաբերությունները Սփյուռքի հետ:

4. Պաշտպանական բարեփոխումների ռազմավարությունը

Ռազմական անվտանգության ապահովումը առանձնահատուկ դեր է խաղում Հայաստանի ազգային անվտանգության ապահովման գործում:
Մեր տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրադրությունը դեռևս անկայուն է: Այն եռուն, անցումային շրջանում է, երբ անվտանգության խնդիրների լուծման համար տարածաշրջանային պետություններն օգտագործում են ռազմական գործոնը: Դա հանգեցնում է պետությունների ռազմականացմանը, սպառազինությունների մրցավազքին:
Այդպիսի ռազմականացված միջավայրում Հայաստանի համար ի հայտ են գալիս ռազմական բնույթի բազմաթիվ սպառնալիքներ, որոնց չեզոքացումը մեծապես պայմանավորված է հզոր և մարտունակ զինված ուժերի առկայությամբ: Ուստի Հայաստանի կայուն զարգացման ապահովման գործում գերակա առաջնահերթություն է դառնում ռազմական անվտանգության ապահովումը: Ի տարբերություն մյուս առաջնահերթությունների, որոնք առավելապես բխում են մեր ազգի ինքնության պահպանման ու զարգացման բնական շահերից, հզոր զինված ուժեր ունենալը պարտադրված առաջնահերթություն է:
Հայաստանի ռազմական անվտանգության երաշխիքը մարտունակ, ռազմական սպառնալիքների լիակատար չեզոքացմանը և ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծմանը մշտապես պատրաստ զինված ուժերն են: Զինված ուժերի զարգացումը, կատարելագործումը, նոր մարտահրավերներին համապատասխանեցումը շարունակական ու դինամիկ գործընթացներ են:
Ռազմական անվտանգության ապահովման, զինված ուժերի մարտունակության ամրապնդման ամենաարդյունավետ ուղին են ռազմական ինտեգրումն ու նպատակային բարեփոխումները:
Սակայն անմիջական ռազմական սպառնալիքի պայմաններում այդ մարտավարությունը պահանջում է մեծ զգուշավորություն: Թե՛ ինտեգրումը, թե՛ բարեփոխումները պետք է ծառայեցվեն ռազմական անվտանգության ռեսուրսների զարգացման այլընտրանքային հնարավորությունների ստեղծմանը:
ՀՀ Զինված ուժերի այլընտրանքային հնարավորությունները դրսևորվում են տարբեր միջազգային ռազմական ստանդարտներին համապատասխան նրա ներդաշնակ փոխգործակցության հնարավորությունների ստեղծման միջոցով: Այս առումով ռազմական անվտանգության ապահովման երաշխիք են ինչպես երկկողմ ու ՀԱՊԿ շրջանակներում հայ-ռուսական ռազմական դաշինքը, այնպես էլ համագործակցության զարգացումը ՆԱՏՕ-ի կառույցների ու ԱՄՆ-ի հետ:

Հայաստանը Եվրաատլանտյան ուղղությամբ հետևողական պաշտպանական բարեփոխումներ է իրականացնում Պլանավորման և վերանայման գործընթացի և Անհատական գործընկերության գործողությունների պլանի շրջանակներում: Այս առումով բարեփոխումները կրելու են համակարգային բնույթ, ապահովելու են պաշտպանական համակարգի պլանավորման ու կառավարման մեխանիզմների արդիականացումը: Ինչ վերաբերում է ինտեգրմանը, ապա այն հավասարակշռված է, չի նախատեսում անդամակցություն ՆԱՏՕ-ին և միտված է ՆԱՏՕ-ի հետ ներդաշնակորեն փոխգործակցող ստորաբաժանումների, առավելապես՝ խաղարարար ուժերի ստեղծմանը:
ՀԱՊԿ շրջանակներում կատարվող բարեփոխումների ռազմավարությունը նպատակաուղղված է անվտանգության սպառնալիքների չեզոքացման միասնական և արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը: Ինչ վերաբերում է ինտեգրմանը, ապա դրա լավագույն օրինակներն են հայ-ռուսական միացյալ զորախմբավորումը, ՀՕՊ-ի համատեղ համակարգը և այլն:
Եթե Եվրաատլանտյան ուղղությամբ կապերի աշխուժացումը պայմանավորված է ՆԱՏՕ-ի և Եվրամիության ընդլայնմամբ, Եվրոպայի նոր հարևանների ծրագրում Հարավային Կովկասի ընդգրկմամբ, Եվրոպական կառույցներին ինտեգրումը որպես ՀՀ արտաքին քաղաքականության գերակա ճյուղ ճանաչելու հանգամանքով, ապա Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքին զուգընթաց համագործակցության զարգացումը ՀԱՊԿ շրջանակներում պայմանավորված է այդ կազմակերպության ներսում կատարվող զգալի տեղաշարժերով, անվտանգության ապահովման իրական մեխանիզմների ստեղծման գործընթացներով: Անվտանգության քաղաքականությունն այս երկու ուղղություններով համեմատաբար հավասարաչափ ձևով զարգացնելու հնարավորությունները պայմանավորված են անվտանգության այս երկու համակարգերի առջև ծառացած գլոբալ սպառնալիքների առկայությամբ, ինչը դրանց միջև եղած հակասությունները մղում է երկրորդ պլան՝ ստիպելով ավելի ու ավելի ընդլայնել համագործակցության շրջանակը:
Հետևելով անվտանգության քաղաքականության փոխլրացման սկզբունքին՝ մենք փորձում ենք շահագրգիռ երկրների և համակարգերի համար ապահովել առավելագույն կառուցողական դաշտ՝ առաջնորդվելով նրանց ընդհանուր հետաքրքրություններով և դրանով իսկ մեղմելով առկա որոշակի հակասությունները: Մասնավորապես՝ ակտիվորեն մասնակցելով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում իրականացվող ռազմաքաղաքական ինտեգրման գործընթացներին՝ Հայաստանը ռազմավարական համագործակցություն է իրականացնում Ռուսաստանի հետ, ինչը բնավ չի խանգարում, որ կառուցողական համագործակցություն զարգացվի նաև ՆԱՏՕ-ի հետ: Այսօր ԱՄՆ-ի հետ իրագործվում են մի շարք ծրագրեր, և միաժամանակ անվտանգության բնագավառում խորհրդակցություններ են անցկացվում Իրանի հետ:

## IV. Ամփոփում. Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության գերակայությունները

Առաջնորդվելով մեր երկրի կայուն զարգացման շահերով, բարեփոխումների և ինտեգրման արտաքին ու ներքին ռազմավարությամբ՝ կարող ենք ամփոփել այն անելիքներն ու պրոբլեմները, որոնք այսօր որպես գերակայություններ դրված են ազգային անվտանգության ապահովման օրակարգում: Այդ գերակայություններն են.
արտաքին անվտանգության ապահովման բնագավառում՝ բոլոր պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ բազմերաշխիք ու հավասարակշռված հարաբերությունների կառուցում, դաշնակիցների և գործընկերների հետ փոխլրացման բազմակողմ քաղաքականության իրականացում, արտաքին վտանգների կանխարգելման ու չեզոքացման համար օպերատիվ և երկարաժամկետ ծրագրերի իրականացում, Հայաստանի ազգային անվտանգության շահերի առաջադրում Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվող բոլոր միջազգային կազմակերպություններում ու հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, Հայաստանի ռազմական հնարավորությունների ամրապնդում, Զինված ուժերի արդիականացում, համագործակցություն առանձին պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարում և զանգվածային ոչնչացման զենքի չտարածման բնագավառում, բազմակողմ համագործակցության զարգացում անվտանգության համակարգերի՝ ՀԱՊԿ և ՆԱՏՕ-ի, ինչպես նաև Ռուսաստանի ու ԱՄՆ-ի հետ, արտագաղթի հաղթահարում և Հայաստան–Սփյուռք համագործակցության ամրապնդում երկքաղաքացիության և հայրենադարձության միջոցով, ակտիվ մասնակցություն տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ծրագրերին, Հայաստանի կենսական ու ռազմավարական շահերի դեմ և Հայաստանի շուրջ միջազգային բացասական կարծիքի ձևավորմանն ուղղված թշնամական պետությունների ապատեղեկատվությանը հակազդման արդյունավետ համակարգի ստեղծում,
ներքին անվտանգության ապահովման բնագավառում՝ Հայաստանի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովում, աղքատության հաղթահարում, կայուն և սոցիալական ուղղվածությամբ տնտեսական քաղաքականության իրականացում, մանր և միջին բիզնեսի, ինչպես նաև էներգետիկայի և գիտատար արդյունաբերության ոլորտներում ակտիվ ներդրումային քաղաքականության խրախուսում, Հայաստանի Հանրապետության գիտատեխնիկական ապահովում, առաջատար տեխնոլոգիաների զարգացման ապահովում, երկրում բնապաշտպանական իրավիճակի արմատական բարելավում, տեղեկատվական անվտանգության մեխանիզմների մշակում և իրականացում, օտարերկրյա լրտեսական գործակալությունների, հատուկ ծառայությունների քայքայիչ գործունեության դեմ հետևողական պայքարի իրականացում:

Ներքին անվտանգության ոլորտում կարևորվում է ժողովրդավարացման, կայուն զարգացման ապահովման ասպարեզը՝ մարդու և քաղաքացու անձնական անվտանգության, նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովում, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մեխանիզմների և օրենսդրության կատարելագործում, հետևողական պայքար կոռուպցիայի դեմ, իրավակարգի ամրապնդում, հավասարակշռված միջէթնիկական հարաբերությունների, հասարակության սոցիալ-քաղաքական կայունության ապահովում, օրենքի առջև ՀՀ բոլոր քաղաքացիների, այդ թվում՝ պաշտոնատար անձանց, պետական մարմինների, քաղաքական կուսակցությունների, հասարակական ու կրոնական կազմակերպությունների հավասարության ապահովում:
Ի վերջո, կա մի պարզ ճշմարտություն. ազգային անվտանգության ռազմավարության բոլոր թվարկված ուղենիշները ծառայում են մի վերջնական և գլխավոր նպատակի՝ Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ ապագայի կերտմանը: Իսկ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը առաջին հերթին Հայաստանի ժողովրդի՝ որպես իշխանության միակ կրողի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է նրա կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Վերև
Հավելված 1
ՀՀ նախագահի 2005թ. դեկտեմբերի 15-ի
ՆԿ-293-Ն կարգադրության

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Սերժ Սարգսյան ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար /հանձնաժողովի նախագահ/

Միհեր Շահգելդյան ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ /համաձայնությամբ/

Տիգրան Սարգսյան ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Սամվել Նիկոյան ՀՀ ԱԺ պատգամավոր /համաձայնությամբ/

Հրայր Կարապետյան ՀՀ ԱԺ պատգամավոր /համաձայնությամբ/

Գուրգեն Արսենյան ՀՀ ԱԺ պատգամավոր /համաձայնությամբ/

Հակոբ Հակոբյան ՀՀ ԱԺ պատգամավոր /թիվ 31 ընտրատարածք, համաձայնությամբ/

Գառնիկ Իսագուլյան ՀՀ նախագահի խորհրդական

Արթուր Աղաբեկյան ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Արման Կիրակոսյան ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

Պավել Սաֆարյան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ

Գագիկ Գագյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ

Արծվիկ Մինասյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Հայկ Դարբինյան ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Գագիկ Վարդանյան ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ

Աշոտ Աբովյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Սիմոն Պապյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ

Սամվել Ավետիսյան ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ

Արեգ Գալստյան ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ

Արա Ավետիսյան ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Գագիկ Գյուրջյան ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ

Վաչե Տերտերյան ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ

Հրանտ Բեգլարյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ

Ռուզաննա Ալավերդյան ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ

Հրաչյա Հարությունյան ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ

Արարատ Մահտեսյան ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետի առաջին տեղակալ

Էմիլ Գաբրիելյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտի տեղակալ

Հայկ Քոթանջյան ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական /հանձնաժողովի քարտուղար/

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆ
Վերև
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

I. - ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

2-րդ նիստ - մարտի 21, 2006 թ.
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ: ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ
3-րդ նիստ - ապրիլի 11, 2006 թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
4-րդ նիստ - ապրիլի 28. 2006 թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
5-րդ նիստ - մայիսի 12, 2006 թ.
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* * *

Հունիս-սեպտեմբեր 2006 -

II. - ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՍՈՒՄՆԵՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ (ժամանակացույցը կհայտնվի լրացուցիչ կերպով)